



Պաշտօնաթերթ՝
 Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
 Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
 1060 N. Allen Ave. Suite 101
 Pasadena, California 91104

ԵՂԵՈՆԻ 92-ԱՄԵԱԿԻՆ ԱՐԹԻԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ Ապրիլ 24ին, Հայկական Ցեղասպանության 92րդ տարելիցն է: Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս համայն հայութիւնը պիտի ոգեկոչէ իր նահատակներու յիշատակը:

Ոգեկոչումը իւրաքանչիւր հայու նուիրական պարտքն է իր նախնիներուն ու սուրբ աւանդ՝ նոր սերունդին, որպէսզի ան վառ պահէ Հայկական դատի հետապնդման պայքարի ջանքը, միջնաբերդ անոր արդար եւ ամբողջական լուծումը:

Այսօր քրքական կառավարութիւնը ոչ միայն կ'ուրանայ եղեռնը, այլեւ ջանք չի խնայեր խեղաքիւրելու պատմական փաստերը, աշխարհը մոլորեցնելու սինյոյսով:

Որքան թուրքիս սասուկացնէ իր նեղգաղափարականութիւնը, նոյնքան եւ մենք պէտք է դրսեւորենք անկոտորում կամք ու յարատեւութիւն:

Հետեւաբար, պահանջատիրութեան պայքարը թէեւ կը խորհրդանշուի Ապրիլ 24ով, սակայն չի կրնար սահմանափակուիլ սոսկ այդ օրուան ոգեկոչումով: Բազմաթիւ այս պայքարը կը պահանջէ անդուլ աշխատանք եւ Սփիւռքի ու հայրենիքի միջեւ ներդաշնակուած գործունէութիւն ու միասնական ոգի:

Այդ միասնական ոգին խորհրդանշելու համար, այս տարի Հայկական Ցեղասպանութեան ոգեկոչման համագաղութային մարմինը որոշեց երբ մը կազմակերպել դէպի Մոնթեպելլոյ յուշարձան:

Հոն, իւրաքանչիւր հայ յորդիկի հնարաւորութիւն պիտի տրուի ծաղիկի մը գետեղումով՝ յարգանքի տուրք մատուցանելու նահատակներու յիշատակին, միանալով հայրենիքի մեր խորհրդուն եւ եղբայրներուն, որոնք աւանդաբար արդէն իսկ նոյնը կը կատարեն Ծիծեռնակաբերդի մէջ:

Մարմինս ձրի փոխադրամիջոց պիտի տրամադրէ բոլոր անոնց, որոնք կը փափաքին մասնակցիլ այս երթին:

Յետայսու, այս երթը պիտի կրկնուի ամէն տարի, զայն աւանդութիւն դարձնելու նպատակով:

Ազգային գիտակցութիւնը կը պահանջէ, որ ամէն մէկ հայ իր գործօն մասնակցութիւնը բերէ ոչ միայն ապրիլեան ոգեկոչման ձեռնարկներուն, այլ պահանջատիրութեան ընդհանուր պայքարին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՊԵԿՈՉՄԱՆ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ



ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՄԱՆ ԿՏԱՆԳՈՒԱԾ
 Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տիւրունի» երիտասարդական միութեան անդամները Չորեքշաբթի, Ապրիլ 11-ին Երեւանի մէջ ցոյց կազմակերպած են, իշխանութիւններու կողմէ խօսքի ազատութեան նոր սահմանափակումներուն դեմ բողոքելու համար: Տեսնել էջ 4:

ԹՈՒՐԹԻԱ ԱՌԱՐԿԱԾ Է ՌՈՒՆՏԱՅԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍԻՆ ՀԱՅՈՑ ԵՂԵՈՆԻ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ԴԵՍ

Ռուսաստանի ցեղասպանութեան 13-րդ տարելիցին նուիրուած ցուցահանդէսը, որու բացումը պիտի կատարուէր Երկուշաբթի, Ապրիլ 9-ին Նիւ Եորքի ՄԱԿ-ի կեդրոնատեղիէն ներս, յետաձգուած է, քանի որ թրքական կողմը առարկած է հոն Հայոց Եղեռնի յիշատակման դէմ:

Ինչպէս «Ասոշիէյթէժըտ փրես» գործակալութեան տեղեկացուցած է ցուցահանդէսի նախաձեռնող՝ Մեծ Բրիտանիոյ մէջ գործող «Իջիս Թրասթ» կազմակերպութեան գործադիր տնօրէն Ջէյմս Սմիթ, ՄԱԿ-ի հանրախն տեղեկատուութեան վարչութիւնը հաստատած էր ցուցահանդէսին ներկայացուելիք նիւթերը:

Շարք էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋԱՐՇԱԲԸ ՍԿՍԱԻ ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՈՒ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ ԸԱԼԱԾԱՆՔՆԵՐՈՒ ԵՆԹԱՐԿՈՒՂ ՆԱԽԿԻՆ ԻՇԽԱՆԱԴՐՆԵՐԵՆ ՄԻՆ ԿԸ ԽՈՍԱՆԱՅ ԸՆՈՒՆԱԼ ԵՐԿՐԵՆ

Ապրիլ 8-ին պաշտօնապէս սկսաւ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւը, որ առաջին օրէն իսկ յատկանշուեցաւ թեկնածուներու դէմ կատարուած բռնութիւններով եւ գործող օրէնքներու խախտումներով, որոնք կու գան բացառապէս դարձնելու, թէ գործող իշխանութիւններու օրով ազատ եւ արդար ընտրութիւններու կայացումը դժուար իրագործելի է:

Ընտրարշաւի առաջին օրն իսկ, գիշերուայ ժամերուն յարձակումներ տեղի ունեցան էջմիածին քաղաքը ընդգրկող թիւ 19 ընտրատարածքէն մեծամասնական կարգով թեկնածուներ Յակոբ Յակոբեանի անձնական մեքենայի եւ Սուսաննա Յարութիւնեանի նախընտրական շտաբի վրայ:

Ներկայիս խորհրդարանի անդամ պատգամաւոր Յակոբ Յակոբեանի կանգնած ինքնաշարժին վրայ անձանօթներ արձակած են 20-30 փամփուշտ:

Ինչ կը վերաբերի թեկնածու Սուսաննա Յարութիւնեանին, նոյն երեկոյան այրուած են անոր նախընտրական շտաբի վրայ:

Իւր նտրական շտաբի 4 սենեակները: «Գիշերուայ ժամը 4:00-ին, փաստօրէն, ոստիկանութիւնում էլ է եղել յայտարարութիւն, իմացել են, բայց ինչ չեն զգուշացրել: Ես առաւօտեան ժամը 9:30-ին եմ իմացել», ըսած է թեկնածուն «Ազատութիւն» ռատիոկայանին:

«Բանականութեանս մէջ ուղղակի չի տեղաւորուում, որ իրեն տղամարդ կոչող մարդը, որը իմ մրցակիցն է, կարող է իրեն այս տեսակ այլանդակութիւններ թոյլ տալ», - յայտարարած է Սուսաննա Յարութիւնեան:

Այս դէպքերէն օր մը ետք, դատարանը եկաւ անվաւեր հուշակէլու Յակոբեանի եւ Յարութիւնեանի թեկնածութիւնները:

Արմաւիրի մարզի առաջին ատեանի դատարանը Երեքշաբթի, Ապրիլ 10-ին անվաւեր ճանչցաւ Յակոբ Յակոբեանի եւ Սուսաննա Յարութիւնեանի թեկնածութիւնները գրանցելու մասին ընտրատարածքային ընտրական յանձնաժողովի որոշումը՝ բաւարարելով նոյն ընտրատարածքէն ներս առաջադրուած, նոյն անունով մէկ այլ Յակոբ Յակոբեանի դիմումը: Շատերու կարծիքով այս երկրորդ Յակոբեանի անունը մէջտեղ նետուած էր շփոթ ստեղծելու եւ իշխանութիւններու նախընտրած թեկնածուի, վերջերս բանակէն հրաժարած զօրավար Սէյրան Սարոյեանի ընտրութիւնը ապահովելու համար:

Դատարանի վճիռի հրապարակումից յետոյ Յակոբ Յակոբեանը

ներու նկատմամբ խտրականութեան եւ վերացնելու երկրի Քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածը, որ քրէական պատիժ կը սահմանէ «թրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար: Անոնք նաեւ Հայաստանին կոչ կ'ընեն փոխել «միապետական ուղեգիրը, ազատ եւ արդար ընտրութիւններու կարելիութիւն տալ եւ յարգել մարդու իրաւունքները»:

Նոպէլեան մրցանակի դափնեկիրները երկու երկիրներուն կոչ կ'ընեն նաեւ բանալու հայ-թրքական սահմանը՝ ատով իսկ բարեխաւելու տնտեսական պայմանները սահմանի երկու կողմերուն եւ ընձեռելով մարդկային փոխյարաբերութեան կարելիութիւն, որ էական նշանակութիւն

ներու նկատմամբ խտրականութեան եւ վերացնելու երկրի Քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածը, որ քրէական պատիժ կը սահմանէ «թրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար: Անոնք նաեւ Հայաստանին կոչ կ'ընեն փոխել «միապետական ուղեգիրը, ազատ եւ արդար ընտրութիւններու կարելիութիւն տալ եւ յարգել մարդու իրաւունքները»:

Նոպէլեան մրցանակի դափնեկիրները երկու երկիրներուն կոչ կ'ընեն նաեւ բանալու հայ-թրքական սահմանը՝ ատով իսկ բարեխաւելու տնտեսական պայմանները սահմանի երկու կողմերուն եւ ընձեռելով մարդկային փոխյարաբերութեան կարելիութիւն, որ էական նշանակութիւն

ներու նկատմամբ խտրականութեան եւ վերացնելու երկրի Քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածը, որ քրէական պատիժ կը սահմանէ «թրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար: Անոնք նաեւ Հայաստանին կոչ կ'ընեն փոխել «միապետական ուղեգիրը, ազատ եւ արդար ընտրութիւններու կարելիութիւն տալ եւ յարգել մարդու իրաւունքները»:

Նոպէլեան մրցանակի դափնեկիրները երկու երկիրներուն կոչ կ'ընեն նաեւ բանալու հայ-թրքական սահմանը՝ ատով իսկ բարեխաւելու տնտեսական պայմանները սահմանի երկու կողմերուն եւ ընձեռելով մարդկային փոխյարաբերութեան կարելիութիւն, որ էական նշանակութիւն

ներու նկատմամբ խտրականութեան եւ վերացնելու երկրի Քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածը, որ քրէական պատիժ կը սահմանէ «թրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար: Անոնք նաեւ Հայաստանին կոչ կ'ընեն փոխել «միապետական ուղեգիրը, ազատ եւ արդար ընտրութիւններու կարելիութիւն տալ եւ յարգել մարդու իրաւունքները»:

ներու նկատմամբ խտրականութեան եւ վերացնելու երկրի Քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածը, որ քրէական պատիժ կը սահմանէ «թրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար: Անոնք նաեւ Հայաստանին կոչ կ'ընեն փոխել «միապետական ուղեգիրը, ազատ եւ արդար ընտրութիւններու կարելիութիւն տալ եւ յարգել մարդու իրաւունքները»:

Շարք էջ 4

Շարք էջ 4

ԲԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«ԱԶԳԱՅԻՆ» ԵՂԱՐՇ

ՈՉ ՄԻ ՕԿՈՒՊԱՑԻԱ

Անցած չորեքշաբթի Կենտրոնական ընտրական յանձնաժողովը հերթական ապօրինի որոշումն ընդունեց՝ գրանցելով «Դաշինքը» եւ Միացեալ Ազատական Ազգային Կուսակցութիւնը (ՄԻԱԱԿ)։ ԿԸՅ-ն անտեսել է այն փաստը, որ այդ կուսակցութիւնների՝ համապատասխանաբար առաջին եւ երկրորդ համարները (Սամուէլ Բաբեանը եւ Գարիկ Մարտիրոսեանը) վերջին 5 տարուայ ընթացքում չեն բնակուել Հայաստանի Հանրապետութիւնում։ Օրէնքը, երբ արդէն ընդունուած է, մաթեմատիկայի նման բան է. այն չի ճանաչում ոչ մի գաղափարախօսութիւն, նոյնիսկ՝ ազգային. կամ բնակուել է, կամ չի բնակուել։ Իսկ օրէնքի խախտումներն արդարացնելու համար կիրառուում են տարբեր «գործիքներ»։ Սամուէլ Բաբեանին, ինչպէս նաեւ աւելի վաղ՝ Ռոբերտ Քոչարեանի դէպքում «գործիքը» ազգային-ազատագրական դէմագոյիսն է՝ «միթէ Ղարաբաղը Հայաստան չէ»։ Այո, անշուշտ, ցանկացած նորմալ, պաթոլոգիաներ չունեցող հայի համար Ղարաբաղը Հայաստան է, ինչպէս նաեւ Հայաստան է վանը, իգրիբը կամ Կարսը։ Բայց մեր յուզական ընկալումները անպայման չէ, որ պիտի համընկնեն օրէնքի պահանջների հետ։ Հայաստանի Հանրապետութիւնը անկախացել եւ միջազգայնօրէն ճանաչուել է խորհրդային Հայաստանի սահմաններով ու տարածքով։ Այդ տարածքից դուրս բնակուողները Հայաստանում չեն բնակուել։

ԿԸՅ դաշնակցական անդամը խորացրեց այդ ազգային-ազատագրական հիմնաւորումը, ասելով՝ «եթէ Սամուէլ Բաբեանը բերեր տեղեկանք, որ նա ՀՀ քաղաքացի է, բայց վերջին 5 տարին բնակուել է վանայ Սուրբ Խաչ եկեղեցու կող-

քը՝ եւ երկու ձեռքով կը քուէարկէի»։ Նման մօտեցումը միանգամայն բնական է այն կուսակցութեան համար, որի գաղափարախօսութեան հիմքում ընկած է «ծովից ծովի տեսլականը»։ Բայց ԿԸՅ մնացած անդամները կարծես թէ աւելի իրատեսական գաղափարներ ջատագովներն են։ Իրականում, եթէ մի կողմ դնենք ամպագոգոտ խօսքերը, թէ՛ դաշնակցականը եւ թէ՛ մնացածները օրինախախտում թոյլ տուցին ոչ թէ «հայրենասէր» եւ «ազգային» երեւալու համար, այլ պարզապէս ենթարկուելով «վերեւները» հրահանգին, քանի որ այդ «վերեւները» Սամուէլ Բաբեանի հետ ինչ-ինչ պայմանաւորուածութեան էին եկել։

ՄԻԱԱԿ-ի երկրորդ համարը՝ Գարիկ Մարտիրոսեանն ակնյայտօրէն բնակուում է Մոսկուայում՝ ո՞վ գիտի, գուցէ նոյնպէս հայկական որեւէ մատուռի մօտակայքում։ Նա շատ յաջող ձեւով գուարճացնում է ռուսական լսարանին՝ երբեմն շահագործելով նաեւ «կովկասեան ազգութեան» թեման։ Քանի որ «ռուսաստաններում» մեր գիտնականներին եւ արուեստագէտներին քիչ են տեսնում եւ հիմնականում շփուում են հայաստանեան գիւղերից ու փոքր քաղաքներից գնացած խեղճուկրակ խոպանչիների հետ, այդ թեմայի շուրջ կատակելը խիստ հոգեհարազատ է ռուս հանդիսատեսին։ Կարելի է միայն յաջողութիւն մաղթել մոսկովեան արտիստին՝ հումորը մեր կեանքի անբաժանելի մասն է։ Միայն ուրում եմ յիշեցնել. Հայկուն ու Մկուն չեն յաւակնում դառնալ ՌԻ Պետդումայի պատգամաւոր։

ԱՐԱՄ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱՒՕՏ»

ԱՄՆ պետքարտուղարութիւնը նախօրէին հրապարակել է հերթական գեկոյցը Հայաստանի մասին։

Այս անգամ Հայաստանին անդրադառնալու առիթ է հանդիսացել «Մարդու իրաւունքների Պաշտպանութեան եւ ժողովրդավարութեան խթանման ուղղուած ԱՄՆ-ի ջանքերի եւ դիւանագիտական քայլերի մասին» գեկոյցը։ Ու թէեւ այս գեկոյցում կրկնուում են բոլոր այն բացասական գնահատականները, որ ներառուած էին պետքարտուղարութեան «Մարդու իրաւունքներ 2006» գեկոյցում, սակայն նոր գեկոյցը կարելի է ինչ-որ իմաստով Հայաստանի համար մեծ յաջողութիւն համարել, քանի որ այստեղ բացակայում է «Հայաստանն օկուպացրել է Ատրպէյճանի տարածքները՝ Լեռնային Ղարաբաղն ու եօթ շրջանները» նախադասութիւնը, որ ընդգրկուած է «Մարդու իրաւունքներ 2006» գեկոյցում։ Սա, ինչ խօսք, լուրջ առաջընթաց է։ Կամ մի գուցէ սա հենց այն ուղղումն է, որ ՀՀ իշխանութիւններին խոստացել էին ԱՄՆ պետքարտուղարութեան ներկայացուցիչները։

Ինչպէս յիշում էք, ԱՄՆ պետքարտուղարութիւնից ՀՀ ԱԳ նախարարի պաշտօնակատար վարդան Օսկանեանին լիազօրել էին հայ հանրութեանը հաղորդել, որ պետքարտուղարութիւնը առաջիկայում հնարաւորութեան դէպքում յայտարարութեան կամ ինչ-որ մէկ այլ ձեւով կ'ուղղի «Մարդու իրաւունքներ 2006» գեկոյցում տեղ գտած վերոնշեալ «սխալմունքը»։

Ի հարկէ, ինչպէս եւ սպասուում էր, այս ընթացքում որեւէ յայտարարութիւն չեղաւ, ուղղումներ նոյնպէս չեղան, եւ պետքարտուղարութեան միակ «խոստովանութիւնն» այն մասին, որ այդ նախադասութիւնը սխալմունք է եղել, մեզ հասաւ ՀՀ ԱԳ նախարարի շուրթերով։ Եւ ահա, հրապարակուած է պետքարտուղարութեան հերթական գեկոյցը։ Վերջինս, իհարկէ, աւելի շատ ԱՄՆ-ի արածի ու չարածի մասին է, ու օբիեկտիւ պատճառներով այնտեղ չէր կարող խօսք լինել Ղարաբաղի մասին, սակայն կարծում ենք՝ դա չի խանգարի, որ ՀՀ իշխանութիւնները յայտարարեն՝ սա հենց այն ուղղումն էր, որի մասին խօսում էին ԱՄՆ պետքարտուղարութեան պաշտօնեաները, ինչը, իհարկէ, ծիծաղելի կը լինի։

Ի դէպ, ինչպէս ՀՀ-ի մասին նախորդ գեկոյցներում, այստեղ նոյնպէս խօսուում է Հայաստանում մարդու իրաւունքների մի շարք խախտումների մասին։ «Հայաստանում 2005 թուականի սահմանադրական հանրաքուէն եւ 2003 թուականի խորհրդարանական ու նախագահական ընտրութիւնները անցան խախտումներով եւ համապատասխանեցին միջազգային չափանիշներին։ Կառավարութեան կողմից մարդու իրաւունքների պաշտպանութեան աստիճանը մնում է ցածր, կարելոր խնդիրները՝ չլուծուած։ Քաղաքացիները հնարաւորութիւն չունեն ազատօրէն փոխել իրենց իշխանութիւններին, պաշտօնեաները ծեծի են ենթարկուած նախաքննութեան մէջ գտնուող կալանաւորներին, Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը եւ ոստիկանութիւնը գործում են անպատիժ, իրականացնում են կամայական ձերբակալութիւններ։ Կալանավայրերում թէեւ կան դանդաղ ընթացող բարեփոխումներ, այնուամենայնիւ, իրավիճակն այնտեղ ճնշող է։ Իշխանութիւնները

սահմանափակում են քաղաքացիների ազատութիւնը, լրատուամիջոցների անկախութիւնը ու հանրահաւաքներ անցկացնելու իրաւունքը», - ասուած է գեկոյցի Հայաստանին վերաբերող հատուածում։

ԱՄՆ պետքարտուղարութիւնը հերթական անգամ յիշեցնում է նաեւ, որ «Հազարամեակի Մարտահրաւէր» ծրագրին Հայաստանի հետագայ մասնակցութիւնը կախուած է նրանից, թէ ՀՀ-ում ինչ առաջընթաց կը լինի ժողովրդավարական կառավարման առումով։

Միւս կողմից, սակայն, գեկոյցում նաեւ նշուում է, որ ծրագիրը 2006 թուականին չի դադարեցուել, թէպէտ այդ տարում ժողովրդավարական կառավարման առումով ետընթաց է արձանագրուել։ Ընդ որում, չի պարզաբանուում, թէ այդ ինչու նոյն պատճառով ծրագիրն անցեալ տարուանից յետոյ չի դադարեցուել, իսկ յաջորդ տարի, ասենք, կարող է դադարեցուել։

Ինչեւէ, ԱՄՆ-ն Հայաստանում մարդու իրաւունքների վիճակի եւ ժողովրդավարութեան խթանման իմաստով իր ռազմավարութիւնն է ունեցել, եւ ինչպէս նշուած է գեկոյցում՝ կենտրոնացել է ժողովրդավարական գործընթացները եւ ինստիտուտները, անկախ մամուլն ու օրէնքի իշխանութիւնը, ուժեղ քաղաքացիական հասարակութիւնը, դաւանանքի, խօսքի եւ հանրահաւաքներ անելու ազատութիւնները խթանելու վրայ։ Իսկ առաջիկայ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններին ընդառաջ, ԱՄՆ աջակցութեան ծրագրերը օգնել են բարելաւել ՀՀ ընտրական համակարգը, գործընթացներն ու ենթակառուցուածքները։

Հայաստանում ԱՄՆ պաշտօնեաները կոչ են արել ՀՀ իշխանութիւններին յարգել հանրահաւաքների անելու ազատութիւնը եւ ուշադրութեամբ հետեւել են այն թուով քիչ հանրահաւաքներին ու ցոյցերին, որ Հայաստանում անցկացուել են 2006 թուականի ընթացքում», - գրուած է գեկոյցում։

ԱՆՆԱ Վ.ՅԱԿՈՒԲԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԵԹԵՐ

Այսօր Հայաստանում բոլորն են խօսում ազատ ու արդար ընտրութիւնների կարեւորութեան մասին եւ բոլորն են շեշտում, որ Ազգային ժողովի ընտրութիւնների ազատ ու արդար լինելու դէպքում միայն Հայաստանի ապագայ իշխանութիւնների լեգիտիմութիւնը կը ճանաչի առաջադէմ աշխարհը։

Ազատ ու արդար ընտրութիւնների անհրաժեշտութեան մասին հաւասարապէս խօսում են ե՛ւ իշխանութիւններն ու իշխանամէտները, ե՛ւ ընդդիմադիրները։

Այսուհանդերձ, արդէն աւելի քան ակնյայտ է, որ Ազգային ժողովի մայիսեան ընտրութիւնը չի կարող ո՛չ արդար համարուել եւ ո՛չ էլ՝ ազատ, որովհետեւ էս վիճից արդէն կոպտօրէն խախտուած է յատկապէս ընտրուողների իրաւունքները եւ առանձնապէս՝ ընդդիմադիր ընտրուողների իրաւունքները։

Նախընտրական շրջանում, դեռ քարոզարշաւը չմեկնարկած, բացայայտ առաւելութիւն էին ստացել հանրապետականները, ինչպէս նաեւ՝ Ծառուկեանի ու Տիգրան Կարապետովի չի կուսակցութիւնները, եւ եթէ հանրապետականների քարոզչութիւնը մասշտաբայնօրէն ստանձնել են հանրային հեռու-

տատեսութիւնն ու ռադիոն, ապա Ծառուկեանի ու Տիգրան Կարապետովի չի կուսակցութիւնների նախընտրական գովազդներով դեռ ամիսներ առաջ անխոնջ նուիրումով զբաղուած էին իրենց իսկ անձնական օգտագործման հեռուստաընկերութիւնները՝ «Կենտրոն» ու ԱԼՄ-ն։ Բնականաբար, «Երկիր-մեդիա» հեռուստաընկերութիւնն էլ Դաշնակցութեան շուրջօրեայ գովազդով էր զբաղուած։

Ստեղծուած իրավիճակում ծիծաղելի է անգամ խօսել ազատ ու արդար ընտրութիւնների մասին։ Փաստօրէն, մեր փողաւոր ու փողատէր կուսակցութիւններն անընդհատ ու անվճար գովազդուել ու գովազդուելու են, իսկ այն ընդդիմադիրները, որոնք անհամեմատ աղքատ են, կամ պիտի բաւարարուեն իրենց շարտուած երկուրոպէանոց եթերով, որից հագլւ կը հասցնեն ծիւկ անել իրենց ընտրողներին, կամ ահաւոր բարձր գներ են վճարելու իրենց գովազդային արշաւը շատ թէ քիչ տեսանելի դարձնելու համար։

Այս ամենից յետոյ արժէ՞ արդեօք ազատ ու արդար ընտրութիւնների յոյսեր եւ պատրանքներ փայտիլել։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ՏԱՐԵԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Ծրչանի
ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱՆՍԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԽԹԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

ԼՈՒՐԵՐ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ.- «ՇԱՍ ԼՈՒՐՁ ԵՒ ԾԱՆՐԱԿՇԻՌ ՏՈԿՈՍ ԵՆՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Շատ լուրջ, ծանրակշիռ տոկոս ենք ակնկալում, տոկոսներ որ ասեմ, շատ-շատ մարդիկ կը խառնուեն իրար, տոկոսը որոշում է ժողովուրդը, թող իւրաքանչիւր քաղաքական կառույց, իւրաքանչիւր պատգամաւորութեան թեկնածու կարողանայ ազնիւ քաղաքականութեան մրցակցութեան պայմաններում շահել ժողովրդի վստահութեան քուէն, թող մարդիկ ընտրեն նրան, ում որ հաւատում են, ում որ վստահում են, բայց կատարեն ոչ թէ փողի եւ պարտադրանքի ընտրութիւն, այլ՝ հոգու եւ խղճի ընտրութիւն»,- Ապրիլ 9-ին «Օրինաց Երկիր» կուսակցութեան նախընտրական ծրագրի շնորհանդէսի ժամանակ ասաց Արթուր Բաղդասարեանը:



«Օրինաց Երկիր» կուսակցութեան նախագահ՝ Արթուր Բաղդասարեան

է ասում, չունեցողին՝ մէկ այլ բան: Մենք գտնում ենք, որ օրէնքները պէտք է գործեն, այլ ոչ թէ մնան թղթի վրայ, օրէնքը չպէտք է անգոր լինի»,- ասում է ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարեանը: Նրա խօսքերով մեր ժողովուրդը արժանի է ապրել արժանապատիւ կեանքով, նրանք գտնում են, որ մեր ժողովուրդը արժանի է ապրել արժանապատիւ կեանքով, նրանք գտնում են, որ մեր երկրում օրէնքը եւ արդարութիւնը պէտք է դառնան գերակայ գործօններ որտեղ օրէնքի եւ արդարութեան պայմաններում հայ ժողովուրդը եւ Հայաստանի Հանրապետութիւնը կարող է առաջընթաց քայլերով զարգացում ապրել:

Նրա խօսքերով, «Օրինաց Երկիր» կուսակցութիւնը պայքարում է արժանապատիւ կեանքի, օրէնքի եւ արդարութեան համար: Նրանք գտնում են, որ մեր ժողովուրդը արժանի է ապրել արժանապատիւ կեանքով, նրանք գտնում են, որ մեր երկրում օրէնքը եւ արդարութիւնը պէտք է դառնան գերակայ գործօններ որտեղ օրէնքի եւ արդարութեան պայմաններում հայ ժողովուրդը եւ Հայաստանի Հանրապետութիւնը կարող է առաջընթաց քայլերով զարգացում ապրել:

ՕԵԿ նախընտրական ծրագրի շնորհանդէսի ժամանակ հաւաքուածներին տեղեկացուեց, որ կուսակցութեան հիմնական նպատակն է Հայաստանը դարձնել օրէնքների երկիր: «Մենք այսօր շատ յաճախ տեսնում ենք, որ օրէնքը եւ կեանքը իրար հետ բազմաթիւ դէպքերում որեւէ առնչութիւն չունեն, մենք տեսնում ենք օրէնքի վեր կանգնած արտօնեալներ, մենք տեսնում ենք, որ Հայաստանում օրէնքը փող ունեցողին, պաշտօն ունեցողին մէկ բան

ՀՅԴ-Ն ՀԱՆՐԱՅԱՒԱՔՈՎ ՍԿՍԵՑ ԻՐ ՔԱՐՈՉԱՐՇԱԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 9-ին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Շառլ Ազնաւուրի անուան հրապարակում կազմակերպել էր նախընտրական քարոզչութեան մեկնարկն ազդարարող հանրահաւաք, որի ընթացքում ելոյթ ունեցան կուսակցութեան լիդերները: Նրանք ժողովրդին ներկայացրեցին իրենց ծրագրերը, որոնցից օրինակ՝ նշում է բնակչութեան աճը, կենսաթոշակի եւ միջին աշխատավարձի բարձրացումը:

«Ով չի քուէարկի Դաշնակցութեան օգտին, թող ինձ ձայն չտայ, որովհետեւ Դաշնակցութիւնը չի կենտրոնանում անձերի շուրջ»,- ասաց ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Հրայր Կարապետեանը, ով ընտրութիւններին մասնակցելու է

ԿԱՐՈՂ Ա՞ ՍԻԱԿՈՒԵԼ ԵՄ

ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»: «ԼՂ ՊԲ-ի ստորաբաժանումները հանդիսանում են ՀՀ գինուած ուժերի ստորաբաժանումներ», - մի քանի օր առաջ լրագրողների հետ զրոյցում յայտարարել էր պաշտպանութեան նախկին փոխնախարար, գործող ՀՅԴ-ական Արթուր Աղաբեկեանը: «Չէ՞ք կարծում, որ այդ յայտարարութեամբ դուք հրապարակել էք պետական գաղտնիք պարունակող տեղեկութիւններ», - մեր թղթակիցը հարցրել է Աղաբեկեանին: «Ես այդպիսի բան եմ յայտարարել: Ուրեմն սխալուել եմ», - ասել է Աղաբեկեանը, ով այսօր ՀՅԴ համամասնական ցուցակով մասնակցում է Աժ ընտրութիւններին եւ յաւակնում դառնալ ՀՀ Պաշտպանութեան նախարար:

Ուսանողական վարկերի ներդրում, կանանց կենսաթոշակային տարիքի իջեցում, նպաստների աւելացում, առաջին դասարանից 2օտար լեզուների ներդրում, պրոֆեսիոնալ բանակ, ուշադրութիւն գիւղատնտեսութեանը, առողջապահութեանը, արդիւնաբերութեանը, մշակութիւն, սա ՕԵԿ ծրագրային հիմնական դրոյթներից է:

Օրինաց երկիրը առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցելու է «Մենք պայքարում ենք արժանապատիւ կեանքի, օրէնքի եւ արդարութեան համար» կարգախօսով:

մեծամասնական ընտրակարգով: Իսկ ՀՅԴ բիւրոյի անդամ Հրանդ Մարգարեանն ասաց. «Մենք չենք հայհոյելու, չենք սպառնալու եւ ընտրակաշառք չենք բաժանելու, այլ աշխատելու ենք: Մենք պէտք է ստեղծենք միջին խաւ»:

Հանրահաւաքն ուղեկցում էր համերգով, որին մասնակցում էին սիմֆոնիկ նուագախումբն ու ազգազրական երգեր կատարող երգիչներ: Ի դէպ, Հանրահաւաքին մասնակցում էին բազմաթիւ երիտասարդներ եւ դեռահասներ: Նշենք, որ ՀՅԴ կուսակցութիւնը առաջիկայ ընտրութիւններին մասնակցելու է մեծամասնական ընտրակարգով առաջադրուած 90 եւ համամասնականով՝ 41 թեկնածուներով:

ԱՄՆ-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՖԻՆԱՆՍԱԲՈՐՄԱՍԲ ԿԵՐԱԶԻՆՈՒԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի Ատոմային էլեկտրակայանում (ՀԱԷԿ) այսօր բացուել է ֆիզիկական անվտանգութեան նորովի վերազինուած համակարգը, որը ձեւաւորուել է ԱՄՆ-ի էներգետիկայի ղեկարարամենտի 3,5 միլիոն դոլարի տեխնիկական ու ֆինանսական աջակցութեան հաշուին ու ներառում է մուտքի վերահսկման ենթակառուցուածքներ, անցազրեր ու տեսահսկում:

Ինչպէս տեղեկացնում են Հայաստանում ԱՄՆ-ի ղեկավարման հասարակայնութեան հետ կապերի բաժնից, բացման արարողութեան ժամանակ փոխղեկարարի պաշտօնակատար Ռոբին Ֆիլիփսը, մասնաւորապէս, գնահատել է «ատոմակայանի անվտանգ գործարկման պահանջներին Հայաստանի կառավարութեան հաւատարիմ լինելը, որին զուգահեռ նաեւ իրականացուած են ատոմակայանը շահագործումից հանելու ուղղուած քայլեր»:

«Միջուկային անվտանգութիւնը յատկապէս կարեւորում է՝ հաշուի առնելով ներկայիս վտանգներն ու այն հանգամանքը, որ

հասարակչները եւ միւսները կարող են փորձել միջուկային նիւթերն օգտագործել անմեղ մարդկանց դէմ», - ընդգծել է փոխղեկարար՝ յաւելելով. - «Անվտանգութեան համակարգի վերազինումից զատ կարեւոր է, որ Հայաստանի կառավարութիւնը շարունակի ատոմակայանում անվտանգութեան նորմերի պահպանման մշակութի ձեւաւորումը՝ աւարտին հասցնելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալութեան նախաձեռնած վերագինման աշխատանքներն ու էներգետիկ ոլորտի դրամական հոսքերից: ԱՄՆ-ի կառավարութեան ֆինանսաւորմամբ ստացուող միջոցների հաշուին բաւարար ներդրումներ կատարելով ատոմակայանի անվտանգութեան ու պահպանման համար»:

Ռոբին Ֆիլիփսը նշել է նաեւ, որ 1996 թուականից ի վեր Միացեալ Նահանգների կառավարութիւնը տրամադրել է աւելի քան 35 միլիոն դոլար՝ Հայաստանի ատոմակայանը վերազինելու ու նախքան շահագործումից հանելը հնարաւորինս անվտանգ գործարկելու համար:

ՅԵՌՈՒՍՏԱՎԱԼԻՔՆԵՐԸ ԿԱՐՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՅՆԵՑՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: 2007 թուականի Փետրուար-Մարտ ամիսներին իրականացնելով Հ1, Հ2, Արմենիա, ԱԼՄ, Շանթ, Երկիր Մեղիա, Կենտրոն հեռուստաալիքների մոնիտորինգ, ինչպէս նաեւ իրականացնելով ԶԼՄ-ների վերջին տարիների իրավիճակի վերլուծութիւն, Երեւանի մամուլի ակումբը կարծիք է յայտնել, որ հեռուստաթերթի ոլորտում վարում է որոշակի համաձայնեցուած քաղաքականութիւն: Այդ մասին նշում է Ապրիլի 10-ին Ուրբաթ ակումբում հրապարակուած ԵՄԱ հաշուետուութեան մէջ:

Հաշուետուութեան հեղինակները, խօսելով հնարաւոր համաձայնեցուած քաղաքականութեան մասին, ներկայացնում են նաեւ իրենց կարծիքով դրա տեսանկի վկայութիւնները: Առաջինը նշում է հեռուստաընկերութիւնների մեծ մասում, այդ թւում եւ հանրային հեռուստաընկերութիւնում հասարակական-քաղաքական հաղորդումների ծաւալի կրճատման մասին: Ընդգծում է, որ բացառութիւն են կազմում այն հեռուստաալիքները, որոնք առնչութիւն ունեն այս կամ

այն քաղաքական ուժի հետ: Յաջորդ նկատառումը քաղաքական գովազդի բարձր գնի սահմանումն է, որը հեռուստաթերթի միջոցով քաղաքական ազդեցութեան դարձում է դժուարամատչելի: Քաղաքական գովազդի գները որոշ դէպքերում գերազանցում են առեւտրային գովազդի գները, նշում է ԵՄԱ հաշուետուութեան մէջ: Հաշուետուութեան հեղինակների գնահատմամբ, այդ հանգամանքը յատկապէս բացասական ազդեցութիւն ունի ընդդիմադիր ուժերի համար, քանի որ իշխանականներն ունեն հեռուստաթերթից օգտուելու այլընտրանքային ձեւեր:

ԵՄԱ փորձագէտները նաեւ նշում են համաձայնեցուած քաղաքականութեան եւս մէկ հաւանական դրսեւորում, այն, որ հեռուստաթերթը դրսեւորել է ընդդիմութեանը անդրադառնալու փուլային միտումներ՝ միաժամանակեայ ակտիւութիւն, մատչելիութիւն ընդդիմութեան համար, յետոյ ընդդիմադիր շատ գործիչների մուտքի խստիւ սահմանափակում:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ՏՕՆԱԿԱՆ ՏՐԱՍԿԱՐՈՒԹԵԱՍԲ Է ՍԿՍՈՒՄ ՔԱՐՈՉԱՐՇԱԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Նորանկախ Հայաստանի առաջին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանի «Ժառանգութիւն» կուսակցութիւնը երեքշաբթի, Ապրիլ 10-ին տօնական տրամադրութեամբ ազդարարեց խորհրդարանական ընտրութիւնների քարոզարշաւի սկիզբը: Նախընտրական ծրագրային դրոյթների ներկայացմանը, քաղաքական ելոյթներին հետեւեց Armenian Navy Band խմբի ու Արտօթունջբոյջեանի համերգը:

Խօսելով նախընտրական ծրագրային դրոյթների մասին՝ Րաֆֆի Յովհաննիսեանը ասաց. - «Առաջինը կ'ասէի՝ իրաւունքի իշխանութիւն: Այո, օրէնքը Հայաստանի Հանրապետութիւնում եւ ցանկացած ժողովրդավարական երկրում պիտի կ'իրաւուի հաւասարապէս բոլորին: Նախընտրական ծրագրում կուսակցութիւնը խոստանում է «ազատ խօսք», «ազատ մարդ», «ազատ երկիր», «օրինականութեան հաստատում», «պայքար կոռուպցիայի դէմ», «սոցիալական արդարութեան հաստատում», «աղքատութեան յաղթահարում» եւ այլն:

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը խոստանում է նաեւ 150 հազար աշխատատեղի ստեղծում, օտարերկրեայ ներդրումների աւելացում: Րաֆֆի Յովհաննիսեանը համոզուած է, որ առաջիկայ ընտրութիւններում իրենք յաղթահարելու են սահմանուած շեմը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

ԲՈՐԻՍ ՖՐԼԵՑԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Եւրոպայում Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Ժողովրդավարական Հաստատութիւնների եւ Մարդու Իրաւունքների Գրասենեակի (ԺՀՄԻԳ)՝ դիտորդական առաքելութեան ղեկավար, դեսպան Բորիս Ֆրլեցը Ապրիլ 6-ին կրկին յայտարարեց, որ Հայաստանի Ազգային Ժողովի ընտրութիւնները «միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնում են»:



ԵԱՀԿ դիտորդական առաքելութեան ղեկավար՝ Բորիս Ֆրլեց

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում Ֆրլեցը հաւաստիացրեց, որ փորձելու են իրենց հաշուետուութիւններն ու յայտարարութիւնները կազմել ձեռք բերուած տեղեկութիւնների հիման վրայ՝ պատշաճ կերպով ուսումնասիրելով եւ գնահատելով դրանք:

«Մենք այստեղ չենք գտնուում դիտարկելու, թէ ով կ'ընտրուի: Մենք այստեղ ենք նախեստուաջ նրա համար, թէ ինչպէս կ'անցնի ընտրական գործընթացը», - ասաց նա: - «Եթէ այս ընտրութիւնները համապատասխան են այն պարտաւորութիւններին եւ կանոններին, որոնք ամրագրուած են ԵԱՀԿ-ի ԺՀՄԻԳ-ի կանոնադրքերում, ապա մեր գեկոյցները կը լինեն կարճ իսկ աշխատանքը՝ աւելի հեշտ»:

Բորիս Ֆրլեցի փոխանցմամբ, իրենք արդէն իսկ սկսել են հանդիպումները քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ՝ համաձայն սահմանուած հերթականութեան:

Հանդիպումներ են եղել նախ խորհրդարանում ներկայացուած կուսակցութիւնների ներկայացուցիչների հետ:

«Ինքս արդէն հանդիպել եմ չորս կուսակցութիւնների՝ Հանրապետականի, ՀԺԿ-ի, «Ազգային Միաբանութեան» եւ Դաշնակցութեան ներկայացուցիչների հետ», - ասաց նա՝ շարունակելով. - «Ես խօսել եմ նաեւ այլ կուսակցութիւնների, այդ թւում՝ «Բարգաւաճ Հայաստան»-ի ղեկավարների հետ»:

Դեսպանը ասաց, որ պատրաստուած է հանդիպել Երեւանի քաղաքապետի հետ՝ քննարկելու, թէ մայրաքաղաքի որ հատուածում եւ ինչպէս է հնարաւոր կազմակերպել եւ անցկացնել հանրահաւաքներ. - «Ինձ համար շատ յստակ է, որ հանրահաւաքները չեն կարող խանգարել այն ամէնին, ինչ վաղօրօք

ծրագրուած է այդ տարածքում»:

Հարցին, թէ արդեօք իրենց նախնական դիտարկման ընթացքում արձանագրել են քաղաքական տարբեր ուժերի կողմից քաղաքացիներից անձնագրերի հաւաքման դէպքեր, ինչի մասին բարձրաձայնուած է ոչ միայն ընդդիմութիւնը, այլեւ իշխանութեան մաս կազմող Դաշնակցութիւնը, Բորիս Ֆրլեցը արձագանքեց. - «Մեր դիտարկումներն ամփոփուած են միջանկեալ հաշուետուութիւնում եւ, ինչպէս նկատեցիք, կոնկրետ այդ հարցն այստեղ չի արտացոլուած: Սակայն մենք, ինչպէս արդէն ասացի, դիտարկելու ենք ընտրութիւնների իւրաքանչիւր փուլ եւ, ես համոզուած եմ, որ մենք կը խորանանք նաեւ մի շարք պրոբլեմատիկ հարցերի մէջ»:

Բորիս Ֆրլեցի գնահատմամբ, փոփոխուած Ընտրական Օրէնսգիրքը ամուր հիմք է ծառայում ժողովրդավարական ընտրութիւնների իրականացման համար. - «Այստեղ հարց կայ օրէնագրքի բարեխիղճ կիրառման եւ քաղաքական կամքի դրսեւորման»:

«Կարող եմ նշել, որ բոլոր այն քաղաքական ուժերը, որոնց հետ ես հանդիպել եմ, պատրաստակամութիւն են յայտնել նպատել այս երկրում ազատ եւ ժողովրդավարական ընտրութիւնների անցկացմանը եւ իրենց ուժերի ներածի չափով հասնել այդ նպատակին», - եզրափակեց ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելութեան ղեկավարը՝ աւելորդ չհամարելով յիշեցնել, որ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնում են:

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՍՏԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՋԱՅԻՆ Է՝ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայաստանի նորանշանակ վարչապետ Սերժ Սարգսեանը «Ֆայնենշըլ Թայմզ» թերթին տուած հարցազրոյցում յայտարարել է, որ Հայաստանը տնտեսական զարգացումը մարդու իրաւունքների ոլորտում բարեփոխումներից առաջնային է համարում:

Համաձայն թերթի հրապարակման, Սերժ Սարգսեանը նշել է, թէ աշխատատեղերն աւելի կարելու են, քան իրաւունքները:

«Չնայած անցած մի քանի տարիների երկիջ տնտեսական աճին՝ շրջափակման մէջ գտնուող կովկասեան հանրապետութեան մէկ երրորդը աղքատութեան շեմից ցածր է գտնուում», - գրում է թերթը:

«Դժուար է խօսել ժողովրդավարական եւ մարդու իրաւունքների մասին, երբ դուք պէտք է բաւարարէք բնակչութեան սոցիալական եւ տնտեսական կարիքները», - ասել է վարչապետը անցած շաբաթ Բրիւսել կատարած այցի ժամանակ:

Այնուհանդերձ Սերժ Սարգսեանը վստահեցրել է, որ Հայաստանի կառավարութիւնը, որը քննադատուած է մարդու իրաւունքների ոլորտում տիրող իրավիճակի համար, կը կատարի միջազգային կառուցներին տուած խոստումները, եւ յոյս է յայտնել, որ մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւնները առաջին ընտրութիւնները կը լինեն, որոնք ազատ եւ արդար կը ճանաչուեն ԵԱՀԿ-ի կողմից:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԸՆԴՎՁՈՒՄ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:
«ՀՀ նախագահական ընտրութիւններից առաջ գործող ռեժիմը հնարաւորութիւն է ունենալու վերահսկել ամբողջ ժողովրդին», - Ապրիլ 11-ին Մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակի մօտ կազմակերպուած բողոքի ակցիայի ժամանակ ասաց Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տիւրունի» ուսանողական-երիտասարդական միութեան ատենապետ Նարեկ Գալստեանը:

Երիտասարդներն ընդվզում են Մարտի 30-ին հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովի ընդունած որոշման դէմ, ըստ որի, Յուլիսի 1-ից նոյնիսկ կանխավճարային բժշկային կապի բաժանորդները պէտք է կնքեն պայմանագիր եւ յստակ ֆիքսվի, թէ ում է պատկանում տուեալ հեռախօսահամարը:

«Դիմում ենք Ձեզ, որպէս ՀՀ Մարդու իրաւունքների պաշտպան, օգտագործելով Ձեր լիազօրութիւնները, պաշարենք, որպէսզի Յուլիսի 1-ից կանխավճարային բժշկային կապերը չֆիքսուեն, այլապէս

դուք նոյնպէս կը վերածուէք մի շինտոյնիկի, ով սպասարկում է գործող իշխանութիւններին», - ասաց միութեան ատենապետ Նարեկ Գալստեանը:

Նրա խօսքերով՝ իրենք չեն հանդուրժի այս կամայականութիւնը եւ բարձրաձայն յայտարարում են, որ 37 թիւը անցեալում է, Ստալինը վաղուց չկայ, նոր Ստալիններ ստեղծելու փորձերն էլ դատապարտուած են եւ իրենք քաղաքացիական պատերազմ են յայտարարում գործող որոշմանը:

Ակցիայի մասնակիցներն իրենց բերանները փակեցին սեւ ժապաւէններով, այնուհետեւ իրենց պահանջները ներկայացնող ծրար յանձնեցին Մարդու իրաւունքների պաշտպանին: Մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակից ակցիայի մասնակիցներին խոստացան, որ օմբուդմենը կը ծանօթանայ փոխանցուած պահանջներին:

Ակցիայի մասնակիցները նշեցին, որ եթէ նամակը դրական պատասխան չստանայ, նրանք պատրաստուած են նոր ակցիաներ կազմակերպել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱԿ

Շարունակուած էջ 1-էն

«Ազատութիւն» ռադիոկայանին ըսած է, որ այս ամէնը կատարուած է որպէսզի Սէյրան Սարոյեանի համար ճանապարհ բացուի դէպի «կոճակ սեղմելու դաշտ»:

«Ես չեմ մնալու քաղաքականութեան մէջ: Երկրից գնալու եմ, չեմ ցանկանում այս երկրում ապրել այսպիսի մարդկանց կողքին», - աւելցրեց ինքը՝ Յակոբեան, որ մինչեւ վերջերս իշխանութիւններում նման գործընթացին օգտուողներէն մին եղած էր:

Միւս կողմէ, ընտրական անհաւասար պայմանները կը շարունակեն տիրապետել հայաստանեան հեռուտեսիլի եթերներուն վրայ: Հակառակ սահմանուած օրէնքներուն եւ նախքան քարոզարշաւի պաշտօնական ժամկէտներուն, Հանրապետական, Բարգաւաճ Հայաստան եւ ՀՅԴ կուսակցութիւններուն ի նպաստ կատարուող հաղորդումները կը շարունակեն ողողել հեռատեսիլի ալիք:

ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴՊՓՆԵԿԻՐՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

ուսի մարդոց միջեւ փոխըմբռնման համար:

Ինչ կը վերաբերի Հայկական Յեղասպանութեան, ապա կոչի հեղինակները այդ հարցին կը մօտենան իրաւական գետնի վրայ, յայտարարելով թէ, ՄԱԿ-ի Յեղասպանութեան Ռեխտը երբեք յետադարձ կիրառում չէ ունեցած եւ հետեւեալը՝ «չի կրնար որպէս հիմք օգտագործուիլ փոխհատուցումներու կամ տարածքային պահանջներու համար»:

ԹՈՒՐՔԻԱ ԱՌԱՐԿԱԾ Է ՀԱՅՈՑ ԵՂԵՆԻ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ԴԵՄ

Շարունակուած էջ 1-էն

Ըստ Սմիթի, ցուցահանդէսը կ'անդադարանայ հայկական կոտորածներու՝ պարզաբանելու համար «ցեղասպանութիւն» բառի իմաստը: Հայաստանի Արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Վարդան Օսկանեան արձագանքելով ցուցահանդէսի յետաձգման, ըսած

ները, որոնք բոլորն ալ կը գտնուին իշխանութիւններու ազդեցութեան տակ: Իսկ, ընդդիմադիր կուսակցութիւնները ժողովուրդին իրենց խօսքը հասցնելու համար պէտք է վճարեն մէկ վայրկեանի (րոպէի) համար մօտ 250 տոլար: Նոյնիսկ վճարելու պատրաստ կուսակցութիւններուն առջեւ կը յայտնուին բազմաթիւ խոչընդոտներ եւ սահմանափակումներ:

Ըստ ընտրական օրէնսգրքին, ընտրութիւններուն մասնակցելու յայտ ներկայացուցած կուսակցութիւնները իրաւունք ունին մէկ ժամ ելոյթ ունենալու Հանրային Հեռատեսիլի ալիքով: Սակայն հոս եւս իշխանութիւնները դիմած են խոտմանկութեան: Հեռատեսիլի տնօրէնութեան կամայական որոշումով, այդ մէկ ժամը բաժնուած է մէկ ամսուայ վրայ, օրական երկու վայրկեան ելոյթի իրաւունքով, ինչ որ շատ կարճ ժամանակ է օրեւէ լուրջ պատգամ փոխանցելու ժողովուրդին:

Կոչի այս օրերուն հրապարակումը կու գայ կասկած յառաջացնելու նախաձեռնութեան հետապնդած իսկական նպատակներուն շուրջ, մանաւանդ երբ նկատի ունենանք որ, Հայկական Յեղասպանութեան ճանաչման հարցը կը գտնուի Ամերիկեան Գոնկրէսի օրակարգին վրայ եւ թրքական կառավարութիւնն ու Միացեալ Նահանգներու պատկան վարչամեքենան միասնաբար կը փորձեն արգիլել հարցի արծարծումը Ներկայացուցիչներու Տունէն ներս:

է- «Բաւարար չէ, որ Թուրքիոյ կառավարութիւնը կարծում է, թէ կարող է իր պատմութիւնը թաքցնել սեփական ժողովրդից: Այժմ իրենց կոծկելու ու աղաւաղման արշաւը այնքան հեռուն է գնացել, որ կանխելու են «Ռուսաստանից քաղուած դասերը» խորագրով ցեղասպանութեան մասին ցուցահանդէսի բացումը»,-

Ս. ՉԱՏԻԿ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանունն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց.

մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն իւրով մեզ գկեանս պարգեւեաց»:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալ ժողովուրդ.

Վերստին մեծ ուրախութեամբ տօնում ենք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնը: Փառաբանութիւն եւ օրհներգութիւն է այսօր մեր հոգիներէն բարձրանում երկինք, գոհաբանական աղօթք՝ առ Տէրը, Ով յաղթական իր Յարութեամբ շնորհեց մեզ փրկութիւն եւ կեանք: Այսօր ինդութեամբ ողջունում ենք միմեանց քրիստոնեաներիս համար անհունօրէն բաղձալի «Քրիստոս յարեալ ի մեռելոց» աւետիսով:

Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը կատարուած ու վկայուած իրադարձութիւն է: Իւղաբեր կանաչք եղան առաջինները, ովքեր կիրակի առաւօտեան թափուր գտան իրենց խաչեալ Վարդապետի գերեզմանը եւ մինչ զարմացած էին՝ լսեցին հրեշտակի աւետիսը. «Չէ աստ, այլ՝ յարեալ» (Ղուկ. ԻԴ 6): Քրիստոսի Յարութեան վկայութիւնն է եւ մեր հաւատը, ի սփիւռս աշխարհի հաւատացեալներով լեցուն Քրիստոսի Յարութիւնն օրհնաբանող եկեղեցիները, Յարուցեալ Փրկիչի էջքի վկայ այս Սուրբ Տաճարը: Քրիստոսի Յարութեան վկայութիւնը նաեւ այդ հաւատով ու փրկութեան յոյսով գողգոթաներից դէպի կեանք ընթանալու մեր ժողովրդի հրաշագործ ուժն է:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր: Դարերի հոլովոյթում երկրի վրայ մարդկային շատ արիւն է թափուել: Սակայն աշխարհում հեղուած արեան ոչ մի կաթիլ այնքան չի ազդել մարդկութեան պատմութեան, մարդկային մտքի ու հոգեւոր ներաշխարհի վրայ, որքան Քրիստոսի հեղած Սուրբ եւ կենարար Արիւնը: Աստուածորդին աշխարհի փրկութեան համար իր կեանքը տուեց որպէս փրկագին, եւ Քրիստոսի գոհաբերութիւնը դարձաւ մարդկութեան հանդէպ աստուածային սիրոյ մեծագոյն ապացոյցը: Իր գոհաբերութեամբ ու Յարութեամբ Քրիստոս մարդկութեանը պարգեւեց ազատութիւն շարի իշխանութիւնից, մեղքի ու մահուան գերութիւնից: Քրիստոս ընծայեց մեզ ազատութիւն, որ վեր է այդ հասկացութեան մարդկային սովորական ըմբռնումներից, ազատութիւն, որ շնորհ է՝ ընթանալու դէպի վերածնունդ կեանք, արդարութեամբ, խաղաղութեամբ նորոգուած կեանք եւ այնքան բաղձալի ու փնտրուած յաւիտենութիւնը կեանքի:

Քրիստոնէական բոլոր եկեղեցիների գանգերի հետ Զատկական հոգե-նորոգ այս խորհուրդն է տարածուում այսօր աշխարհում: Հովուապետ, առաջնորդ եւ հովիւ եկեղեցիների սուրբ սեղանների առջեւ պատարագ են մատուցում, աղօթք բարձրացնում երկինք, «Քրիստոս յարեալ» աւետիսով ողջոյն փոխանցում քրիստոնեայ աշխարհին եւ խաղաղութեան ու սիրոյ պատգամը՝ համայն մարդկութեանը, որ ինամուրի ու անխաթար պահպանու-ուի արարչագործութիւնը Աստուծոյ, գնահատուի եւ կարեւորուի մարդը այնպէս, ինչպէս Աստուած սիրեց մարդուն: Կոչուած ենք Տիրոջից եւ ժամանակի հրամայականների առջեւ պարտաւորուած՝ միաւորելու մեր ջանքերը յանուն աշխարհում ազատ ու երջանիկ կեանքի, յանուն մարդասիրութեան արժէքների, որոնք օրհնեալ պարգեւն են Աստուծոյ:

Աշխարհն, աւաղ, այսօր էլ տագնապով են լցնում Քրիստոսի Յարութեան լոյսից հեռացող ընթացքները: Մեր օրերում էլ տարածուում են յուզայական համբոյրներն ու նիւթապաշտութիւնը: Պիղատոսեան օրինակով շատերը լուանում են իրենց ձեռքերը՝ ոտնահարելով արդարու-թիւնը սեփական բարօրութեան համար: Այսօր էլ խաղաղաբեր Քրիստոսին մերժելու եւ աւազակ Բարաբբային ընտրելու օրինակին են հետեւում մարդիկ՝ իրենց խաբէութիւններով ու բռնութիւններով, սպանութիւններով եւ սեփական շահերի համար այլոց ոտնակոխ անելու մոլուցքով: Խաչի մօտ սզացող Աստուածածինը այսօր ողբում է որդեկորոյս մայրերի հետ պատերազմներում գոհուած զաւակների համար, սգում է չարագործութիւն-ներով իրենց խաչողների համար եւ աշխարհը վշտերով լցնող բազում անարդարութիւնների, նեղութիւնների, աղքատութեան ու կարօտութեան համար:

Աշխարհի այս իրադրութեան մէջ շարունակուում են փորձութիւնները եւ մեր ժողովրդի: Տակաւին ստիպուած ենք պայքարել Լեւոնային Ղարաբաղի հայութեան ազատ ու ապահով ապրելու աստուածաշնորհ իրաւունքի համար, Յեղասպանութեան համընդհանուր դատապարտութեան համար, հայ հոգեւոր եւ մշակութային արժէքների, մեր սրբութիւնների ու սրբավայրերի պահպանութեան եւ փրկութեան համար հարեւան երկրներում:

Յեղասպանութեան փաստը մերժող քաղաքականութիւնը պատճառ է ֆիզիկական, մշակութային, հոգեբարոյական նոր ցեղասպանութիւնների: Անպատիժ ոճրագործութիւնները անխուսափելիօրէն ծնում են նորերը: Հայոց Յեղասպանութեանը հետեւեց Հոլոքոստը, նաեւ՝ Ռուսահայի, Դար-ֆուրի եւ այլ ցեղասպանութիւններ: Բուդապեշտի արձանների կործան-մանը Աֆղանստանում հետեւեց Նախիջևանի հազարաւոր հնագոյն խաչ-քարերի ոչնչացումը Ադրբեյջանի գինուորների կողմից: Օրեր առաջ՝ երբ տակաւին մեր ժողովրդի հոգում չի սպիացել վէջքը Հրանտ Դինքի սպանութեան, թուրքական իշխանութիւնները, աւարտելով Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու նորոգումը, հայկական դարաւոր սրբավայրը վերածեցին թանգարանի: Յեղասպանութեան օրերից եկեղեցին կանգնած էր աղօթական լուութեամբ, այսօր նորոգուած եկեղեցում արգելուած է աղօթքը: Արդարեւ, այսպիսին չեն կարող լինել կրօնների եւ մշակոյթների երկխօսութեան այս նոր դարի ոգին եւ ժողովուրդների համերաշխ գոյակցութեան ձգտումները:

Աստուծան ապաւինած՝ մեծ է մեր յոյսը արդարութեան, ազատութեան, խաղաղութեան յաղթանակի, եւ կենդանի է մեր հաւատը, որով պիտի կերտենք մեր կեանքի նոր յաղթանակները, պիտի կանգնեցնենք աղօթախօս նոր խաչքարեր, լուսեխորան նոր տաճարներ ու բարձրացնենք յաղթութեան նոր կոթողներ յարութեան շնորհի այն ուժով, որ պարգեւում է մեզ Ամենախնամ Փրկիչ մեր Տէրը:



Սիրելի հաւատացեալ զաւակներ մեր, կրկին կենարար աւետիսն ենք բերում ձեզ. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն իւրով մեզ գկեանս պարգեւեաց»: Մարդկանցից խաչուածը յարութիւն է առել, աստուածային զօրութեամբ բացուել է վէճը գերեզմանի, եւ մեր սրտերում տէրունաշնորհ փրկութեան ցնծութիւնն է: Փրկիչ Յարութեան բիւր շնորհներով թող որ զօրանան մեր հոգիները՝ հաւատքի վէճի վրայ հաստատուած գործերով բարօր եւ լուսաշող դարձնելու մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ու Եկեղեցու վերագարթօնքի ուղին: Նորոգուած այս հաւատով անցկացնենք խորհրդարանական առաջիկայ ընտրութիւննե-րը, նախանձախնդրութեամբ, ապագայի հանդէպ վստահութեամբ ու պատասխանատուութեամբ: Թող Յարուցեալ Քրիստոսի բիւր ողորմու-թեանց ներքոյ լինի մեր Հայրենիքը, աշխարհը համայն, եւ ազգեր ու ժողովուրդներ ապրեն ազատ վշտերից ու նեղութիւններից, միմեանց հանդէպ սիրով, եղբայրութեամբ ու խաղաղութեամբ:

Ողջունաբեր այս օրը Քրիստոսի Յարութեան բերկրալի աւետիսով եւ եղբայրական սիրով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապա-տիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին: Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասաւորներին եւ հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի:

Բերկրաշատ եւ յուսառատ հոգով Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչար-եանին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատար-մագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներ-կայացուցիչներին:

Ողջոյն ենք յղում Զատկական հոգեւորոգ ու տօնական այս օրերին Երեւանում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 100-ամեակը նշելու նպատակով աշխարհի տարբեր կողմերից Մայր Հայրենիքում համախմբուած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Բարեգործական Ընդհա-նուր Միութեան բարերարներին, Միութեան Նախագահի գլխաւորու-թեամբ՝ կենտրոնական Վարչութեան ու մասնաճիւղերի ներկայացուցիչնե-րին:

Շնորհաւատ այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, միասնական մեր աղօթքը բարձրացնենք երկինք, որ Տիրոջ փրկութեան պարգեւը աւելի ու աւելի առատանայ աշխարհում, օգնելով մարդկանց ընթանալու դէպի Աստուծոյ բարերար Կամքը, դէպի մարդկութեան բարի ապագան՝ այսօր եւ միշտ եւ յաւիտեան, ամէն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

CHIROPRACTIC - MASSAGE - WEIGHT LOSS - WELLNESS
Chiropractic Health Center
Eliminate Pain Naturally
without drugs. without surgery
Effective Treatment For:
• Low back pain
• Sciatica
• Hip and Knee Pain
• Headaches
• Carpal tunnel
• Neck pain
• Arthritis
Rehabilitation Services:
• Sports Injuries
• Auto accidents
• Post surgical rehabilitation
Wellness programs:
• Weight Loss
• Nutritional counseling
• Lifestyle counseling
• Stress relief
• Stress management
Tsolag J. Kazandjian
Doctor of Chiropractic
CALL TODAY: 626.821.9544
Most Insurance plans accepted Same Day Appointments available
623 West Duarte Road Suite 5, Arcadia, CA 91007

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԱՔԻ ՄԷՉ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Շրջան է մը ի վեր, այլևս յատակ է որ իրաքի մէջ պատերազմական իմաստով «յաղթանակ» մը անկարելի է: Այս կը վկայեն ոչ միայն քաղաքական դիտողները, ամերիկեան Գոնկրէսի անդամներէն մինչեւ ամերիկեան ծանօթ մամուլներ իրազեկ դիտողները, բայց մանաւանդ անոնք որոնք, յատկապէս պատերազմը ղեկավարող բարձրաստիճան գինուորականները: Եթէ ուրեմն այս է ընդհանուրին կարծիքը, գրեթէ անիմաստ եւ վտանգաւոր կը դառնայ

նման զօրեղ բանակ մը անկարող է յաղթանակ ձեռք ձգել, եւ այս հակառակ Պուշի մագլցումի (surge) քաղաքականութեան - այսինքն 130,000 հազար բանակին զրկել յաւելեալ 20-22,000 հազար զինուորներ, որոշում մը որ շատ քիչերուն, մանաւանդ Գոնկրէսի տեմոքրատ անդամներուն, ուրիշ ի՞նչ ընտրութիւն կամ ընտրութիւններ կը մնան Ամերիկայի առջեւ, մանաւանդ երբ այլևս յատակ կը դառնայ որ իրաքեան գործակիրներէն տուեալներ երթալով կը տկարանան: Մոքթատա Սատր ճանչցուած երիտասարդ եւ ծայրայեղ շիի ղեկավարը արդէն իսկ բացայայտ



Հակա-Ամերիկեան ցոյց Իրաքի մէջ

Պուշի «ընթացքը շարունակելու» յամառութիւնը, որմէ անշուշտ ինք կը յուսար յաղթանակ ապահովել: Յստակ է նաեւ որ Պուշի համախոհները իշխանութենէն ներս մատերու վրայ կը հաշուուին, որոնցմէ անշուշտ անդրդուելի եւ իրեն պէս յամառ փոխ-նախագահ Տիք Չէյ-նի: Ինչպէս Պուշ եւ ամբողջ իր ընտանիքը անքակտելի կապերով կապուած է քարիւղի եւ անոր սեփական տէրերուն, նոյնպէս Չէյ-նի քարիւղային եւ այլ շահերով կապուած է այս պատերազմին հետ: Ի հարկէ կան ուրիշ հետապնդումներ ալ, որոնք քողարկուած կը մնան իրաքի եւ անկէ ալ անդին, Միջին Արեւելքի մէջ տեմոքրատիա-ժողովրդավարութիւն հաստատելու իբրեւ թէ անկեղծ տրամադրութիւն:

պայքար յայտարարած է ամերիկեան զօրքերուն դէմ եւ կոչ կ'ուղղէ իրաքեան բանակի եւ ոստիկանութեան հեռու կենալ ամերիկեան բանակի հետ գործակցելէ:

Ամէն պարագայի, Ամերիկա տակաւին ունի քանի մը ընտրութիւններ, հաւանական լուծումներ, որոնք կընան վերջ մը տալ ամերիկեան արկածախնդրութեան, աշխարհի այդ զգալուն շրջանէն ներս:

ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
Ամերիկա ինքզինք կը գտնէ իրաքի մէջ ձախողած պետութեան մը առջեւ: Ազատ կարծեցեալ ընտրութիւններէն ստեղծուած իրաքեան պետութիւնը տակաւին մինչեւ այսօր անկարող եղաւ ինքզինք պարտադրել եւ ակնկալուած քաղաքական, տնտեսական եւ պատերազմական խաղաղութիւն հաստատել երկրէն ներս: Այս կացութեան պատճառները վաղուց պէտք է յատակ ըլլային Ամերիկային: Սիւննի-Շիի-Քիւրտ տարակարծութիւնները դաւաճող պատմութիւն մը ունին, եւ

Պուշի նման միամիտ եւ պատմութեան անձանօթ մէկը կընար միայն ձեռնարկել իր սխալ նախաձեռնութեան: Ձախողած պետութիւն մը իրաքի մէջ, իրապէս նպատաւոր է իրաքի դրացիներուն, յատկապէս Սուրիոյ եւ Իրանի, որոնք շատ ալ հետաքրքրուած չեն, իրաքի մէջ, ամերիկեան հովանաւորութիւնը վաճելով վարչակարգով մը: Անոնք պիտի նախընտրեն ահաբեկչական բռն մը, Միջին Արեւելքի քարիւղով հարուստ շրջանէն ներս: Այս իմաստով, Սուրիոյ եւ Իրանի հետ Ամերիկայի երկխօսութեան փորձերը ձախող են, նոյնիսկ եթէ Ամերիկա ունենայ անկեղծ տրամադրութիւն մը այս երկու երկիրներու հանդէպ իր ընթացքը փոխելու: Այս մէկը առ այժմ կը մնայ անձանօթ:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
Այս մասին մենք արդէն ակնարկութիւն ըրինք նախորդ շաբթուայ սիւնակին մէջ, այսինքն իրաքի տարանջատումը, բաժանումը երեք մասերու, որը պիտի յանգի զանգուածային տեղափոխութեան եւ մահերու:

Այս կարելիութիւնը շատ հաւանական կը թուի եւ այս մասին է որ յաճախ կ'արտայայտուի Պուշ, այսինքն, եթէ Ամերիկա ժամանակէ առաջ լքէ իրաքը, երկիրը պիտի ենթարկուի քաղաքացիական պատերազմի եւ անոր ընկերանալիք ահաւոր վնասներու: Հարց է թէ ներկայիս տեղի ունեցողը իրաքի մէջ քաղաքացիական պատերազմ մը ըլլալէ ի՞նչ ձեւով կը տարբերի: Անոնք որոնք հետեւած են 20րդ դարու պատմութեան կը յիշեն թէ որքան արիւն թափուեցաւ Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ, անկախացման ընթացքին, եւ տակաւին հազիւ թէ կիրքերը հանդարտած կը թուին ըլլայ: Նոյնը եղաւ Իսրայէլի հաստատման ընթացքին Միջին Արեւելքէն ներս, հարց մը որ տակաւին կը պահէ իր այժմէութիւնը, եւ հիմնական դժուարութիւններէն մէկը կը հանդիսանայ շրջանի տագնապէն ներս:

ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
Հակառակ ամերիկեան ներկայութեան, եւ հակառակ Պուշի մագլցումի ճիգերուն, այս հաւա-

նականութիւնը կը մնայ ի զօրու: Ի՞նչ է այս: Իրանեան պետութեան աստիճանական զօրացումն է շրջանէն ներս: Եթէ կացութիւնը այսպէս շարունակուի, դժուար չէ պատկերացնել թէ իրաք, որուն բնակչութեան 60 տոկոսը կը պատկանի շիի համայնքին, եւ որու հարաւային մասին վրայ արդէն մեծ ազդեցութիւն ունի Իրան, ուրեմն իրաք ինչպէս իրանեան տիրապետութեան տակ, իրան մը որ հիւլէական միջոցներու կը փորձէ տիրանալ եւ յատակ հակառակորդն է արեւմտեան շահերու Միջին Արեւելքէն ներս: Իրանի իշխանութիւնը, իր ղեկավար մարդոց բերնով, բազմիցս յայտարարած է իր ընդդիմութիւնը Արեւմուտքի «տիքթաթ»ներուն, իր հիւլէական հետապնդումներու դժով, մանաւանդ նաեւ իր թշնամական վերաբերմունքը Իսրայէլի նկատմամբ:

Այս երեք «ընտրութիւններն» ալ թէ իրաքի եւ թէ Ամերիկայի համար, լուրջ հարցեր են, այն իմաստով որ անոնցմէ որեւէ մէկը ինքնակամ եւ յօժարութեամբ ընդունուած կամ համաձայնուած երեւոյթներ են: Ընդհակառակը, ասոնք ամերիկեան արշաւանքի սխալ եւ պարտադրուած լուծումներն են, որոնց որեւէ մէկուն որդեգրումը լուրջ մտածողութիւն կը պահանջէ, թէ իրաքի եւ թէ Ամերիկայի կողմէ:

Առ այժմ, իրաքի մէջ կայ «ընտրուած» կառավարութիւն մը, որ ըստ երեւոյթին կ'ուզէ այն բաները որ Ամերիկա կ'ուզէ - այսինքն ամբողջ իրաքի ժողովուրդին ապահովութիւնը, իշխանութեան բաժանումի համաձայնութիւն մը կողմերու միջեւ, որ արդիւլէ իրաքի դրացիներէն մէկուն քոնթրոլի տակ ինչպիսի, եւ վերջապէս, աստիճանական հանդարտեցումը երկրին, որպէսզի վերադառնայ բնականոն կեանք մը ներքին ճակատի վրայ: Իրաքի մէջ ներկայիս Ամերիկեան ունի անհրաժեշտ գէնքները եւ նիւթական կարելիութիւնները: Իրեն, այսինքն Ամերիկային կը պակսի իր երկրէն ներս միասնական մօտեցում մը, եւ քաղաքական եւ ժողովրդային անհրաժեշտ նեցուկը:

Իրաքեան թնձուկը տակաւին երկար պիտի գբաղեցնէ շրջանը, մինչեւ իր լուծումը:

Ձեր ճանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Now Available RightPlan PPO 40
Featuring PlanScape® Keeping Californians Covered...
The Power of Blue SM
Health coverage for every household member and every household budget.
Affordable plans for the whole family. SM
Blue Cross of California and BC Life & Health Insurance Company are independent licensees of the Blue Cross Association. The Blue Cross name and symbol are registered service marks of the Blue Cross Association.

ԱՆՌՈՒԹԵՆՏ Է
1975-2005
30th ANNIVERSARY
A.B.A. INSURANCE SERVICES
BEDROS SIAMANTO MARONIAN
818-500-9585 805 East Broadway, Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"
AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056

ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԶՄԱԹԻ ԶԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹԻՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԸ, ԳՏՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ՄԱԿ-Ը ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Բազմաթիւ մարդիկ կողմնակից են Սուդանի Դարժուրի շրջանում ՄԱԿ-ի միջամտութեանը:

Իսկ ֆրանսիացիներն ու ամերիկացիները պատրաստակամ են, որպէսզի իրենց զորախմբերը Դարժուրում խաղաղապահ գործողութեան մասնակցեն:

Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) հանրութեանը, անվտանգութեան ու միջազգային յարաբերութիւնների հարցերով փորձագէտներին ու լրագրողներին փոխանցեց միջազգային առանցքային հարցերի հանդէպ համաշխարհային վերաբերմունքը վերլուծող ուսումնասիրութեան լոյսի ներքոյ կառուցուած երրորդ գեկոյցը: Մարդկանց եւ ժողովուրդներին մարդու իրաւունքների ծանրագոյն խախտումներից, ցեղասպանութիւնից պաշտպանելու հարցում ՄԱԿ-ի պատասխանատուութեանը վերաբերող այս նոր գեկոյցի բացառատունները Համաշխարհային հարցերով Շիկագոյի խորհուրդ եւ Համաշխարհային հասարակական կարծիք կազմակերպութիւնների կողմից ու աշխարհի հարցումներ անցկացնող տարբեր կազմակերպութիւնների հետ համագործակցաբար անցկացուած բազմազգ ուսումնասիրութեան մի մասն են կազմում: Համամոլորակային ու հեղինակաւոր հարցումներում Հայաստանը ներկայացրել է Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնի հանրային կարծիքի ուսումնասիրութեան ազգային ծառայութիւնը:

Will the Armenian-American lobbying efforts be fruitful? I hope so, if our objectives are realistic, and not wishful thinking. An example; the objection raised by Armenian lobbying groups to the appointment of the new US Ambassador to Armenia is not realistic. Everybody knows that an ambassador carries the policy of his government, in this case the policy of US government. To insist that the new ambassador must deviate from US government's policy does not make any sense.

International and Armenian Public Charge

Continued from page 2

UN Security Council has either the responsibility to authorize intervention to stop the killings in Darfur (29%) or the right to do so (15%). Only 9 percent think it does not have this right. "Nearly half (46%) of those polled declined to answer, however, which suggests many Armenians are uninformed about the situation in western Sudan," the report mentions.

Respondents in seven countries were also asked whether they thought their country should contribute troops to "an international peacekeeping force to stop the killing in Darfur." A very large majority of the French (84%) support

contributing troops to a peacekeeping force in Darfur. Among Americans 65 percent approve the idea and just 28 percent are opposed. Armenians tend to be against sending their own troops to join an international peacekeeping force in Darfur. By a margin of 45 percent to 27 percent, Armenians oppose participating in such a mission (28 percent declined to answer).

For details, please see www.thechicagocouncil.org or www.worldpublicopinion.org. WorldPublicOpinion.org is a publication of the Program on International Policy Attitudes at the University of Maryland. For the Armenian version, visit www.acnis.am.

Licence to Kill: Statute 301

Continued from page 3

ers Association and Nobel Prize winner for Literature was also taken to court for the defamation of *Turkishness*.

In an interview with a Swiss newspaper he said that "they murdered 30,000 Kurds and 1 million Armenians and almost no one dares to mention the fact. The proceedings against Orhan Amuk aroused great attention. A European parliamentary delegation followed the proceedings on the ground. Even members of the delegation were not safe from the agitated Turkish fascists: the former British Minister for Europe, Dennis McShane explained that he had been hit as he entered the court and therefore would be lodging an official complaint.

EU Commissioner Olli Rehn explained that the Court proceedings against Pamuk would be a Litmus Test for Turkey. It would be suitable chance to set a positive precedence. In fact the proceedings were later suspended as a prosecution would have negatively influenced the decision regarding the beginning of entry negotiations between the EU and Turkey.

Shafak and Pamuk were lucky the Armenian Hrant Dink was not.

Turkish Criminal Code contains numerous laws which sound harmless and are less well known as Statute 301, which also serves to criminalise intellectuals and journalists. Laws which forbid incitement of the people and the protection of personal honour are formulated in such a way that they can serve the criminalisation of critics. According to the Association of Turkish Publishers more than twenty laws must be changed to ensure that authors and publishers enjoy legal certainty.

The publisher, Ragip Zarakolu has also felt the wrath of the Turkish Justice Department.

Most books concerning the Armenia and Genocide have been published by his publishing house. After the publishing the diary of the Armenian doctor, Garabet Hatcherian, Zarakolu was served with a writ. The diary contained Hatcherian's eye witness account of the destruction of the Armenian and Greek quarters of the Harbour town Izmir by the troops under Mustafa Paschas Kemal. The publication of the book from Armenian author George Jerjian, who is living in England, also resulted in charges being made. According to the Public Prosecutors, the Republic and its founder Mustafa Kemal Atatürk were in both

books defamed. Ragip Zarakolu, who belonged to the closest circle of the murdered Hrant Dink, is considered as one of the most threatened intellectuals.

Calls for the abolition of Statute 301 will certainly become louder after the murder of Hrant Dink. Erdogan won't give way to this pressure coming mostly from Brussels. As this year there are important elections in Turkey and the results will not be influenced by the mere 100,000 who took part in the Mourning demonstration for the murdered journalist.

But even the complete abolition of Statute 301 and other minor laws which restrict the freedom of the press and freedom of speech, is no guarantee that political assassinations will have an end. Most of all, the racial incitement against the 50-60,000 Armenians still living in Turkey will not be prevented. The reality is that the bravest voice of the Armenians in Turkey has been silenced for ever.

Ismet Berkan, Editor of the Left/Liberal daily paper "Radical" described the murder of Hrant Dink as "a racial crime". "They murdered Hrant Dink, firstly, because he was Armenian and secondly, because he thought differently." Also, the world-famous author Yasar Kemal all clarity called the problem by its real name. "Racism is rampant in the Turkey, more than anywhere else in the world." This racism will not be stopped by a few changes in the Criminal Code. For this to happen radical changes in society and the political system must be undertaken and this must take place independent of any EU membership negotiations.

Whether the death of an Armenian is enough to begin this process is questionable.

Many Armenians, in view of the catastrophic prospects, prefer to leave the country. After the murder of Hrant Dink, hope that democracy also in Turkey is achievable, that the Armenian Genocide is recognised, that Armenians can live as equals and in security in Turkey has been brutally destroyed. The developments since the murder show clearly that Turkish racism and nationalism has gained strength and influence. It seems that the European public and politics which for a few days showed shock and outrage have slowly forgotten the murder of Hrant Dink.

Hamburg/Germany

ՐԱՅԱՍՏԱՆԻ ԲՐԻՍՏՈՆԵՌՆԵՐԱՆ ԴԱՐՁԸ

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Պատմագրութիւն

Օտարագրի հայագէտներ մարմաջն ունին Հայաստանի քրիստոնէութեան դարձի թուականը 314 ընդունելու, որպէսզի տարիով մը աւելի ուշ տարած ըլլան զայն Հռոմէական կաթողիկէ եկեղեցւոյ 313 թուականէն, երբ Կայսրութեան սահմաններէն ներս քրիստոնէութիւնը թոյլատրեալ կրօն հռչակուեցաւ ի շարս այլ կրօնքներու: Մեր նպատակն է հաստատել որ Հայոց քրիստոնէութեան դարձի թուականը 301 թուականն է, եւ Ս. Էջմիածնի, ինչպէս նաեւ հայ հոգեւոր իշխանութեան սկիզբն ալ տեղի ունեցած է 303 թուականին: Մկրտիչ Ա խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոս իրաւամբ 1903 թուականը հռչակած էր յատուկ կոնդակով մը որպէս 1600-ամեակը Մայր Աթոռի հաստատման ի Սուրբ Էջմիածին:

Երկու հիմնական ազդակներ պահպանած են եւ զարգացուցած հայկական կրօնական եւ մշակութային աւանդները քաղաքական անընդհատ վեր-ի վայրու մտերու ընթացքին: Առաջինն է անոնցմէ Հայ ժողովուրդի ազգային եկեղեցին, որ դարեր շարունակ հովանաւոր դարձած է մեր ժողովուրդին որպէս կեդրոնական զլխաւոր ուժը, բան մը որ նոյնիսկ Հայ պետութիւնը երբեմն չէ կրցած տալ անոր: Երկրորդ ազդակը հայերէն գրաւոր աւանդն է, գիտականօրէն ծանօթ որպէս պատմագրութիւն, որ ծագում առաւ հայ գիրերու ստեղծումով Ե դարու սկիզբը:

Խօսելով Հայ եկեղեցւոյ ծագման մասին, հարկ է ի մտի ունենալ որ հայոց գրաւոր աւանդութեամբ հասած վաւերական պատմութիւնը կարելի է միայն ընդունել ի նկատել Ե դարու առաջին քառորդէն սկսեալ, եւ ոչ աւելի կանուխ, քանի որ անկէ առաջ հայերէն գիրերը չէին ստեղծուած, եւ մենք չէինք ունեցած գրաւոր պատմութիւնը մեր կրօնքին: Այս կը նշանակէ ուրեմն որ հայոց նախնական քրիստոնէութեան

եւ առաքելական շրջանի դէպքերը չլիթայուած են իրարու՝ աւանդութեամբ ստացուած տեղեկութիւններով, որոնք աւելի ուշ գրի առնուեցան մեր առաջին պատմիչներու ձեռքով:

Ծագման Պարագաները

Հայ քրիստոնէութեան ծագման պարագաները արտայայտուած են արդէն իսկ մեր եկեղեցւոյ պաշտօնական անունին մէջ: Երբ մեր եկեղեցին կը կոչենք Հայաստանեայց Առաքելական եկեղեցի, իսկոյն հայ ժողովուրդին պատկանած ըլլալը բնորոշած կ'ըլլանք, եւ անոր առաքելականութիւնը իստատմանած կ'ըլլանք: Մեր եկեղեցին առաքելական է որովհետեւ երկու առաքելներու՝ Թադէոսի եւ Բարթողիմէոսի ձեռամբ ցանուեցան քրիստոնէութեան նախնազոյն սերմերը Հայաստանի մէջ: Ճիշդ է որ գրաւոր հաստատագրաց մը չկալ որ ժամանակակից ըլլալ սոյն կրկնակի քարոզութեանց, եւ սակայն աւանդութեամբ ստացուած են հնագոյն միւս եկեղեցիներու ծագման պարագաները եւս, քանի որ մեր պարագային գոնէ գրաւոր միջոցներ կը պակասին: Նաեւ նոր կրօնքը սկսաւ տարածուիլ քաղաքական շարունակական հալածանքներու ներքեւ երկրորդ եւ երրորդ դարերուն հաւասարապէս Հռոմէական կայսրութենէն ներս եւ անկէ դուրս:

Հայոց պարագային սրբացուցած ենք երկու վայրեր, ուր պահպանուած կը նկատուին մեր երկու նահատակ առաքելներու տեղերը՝ Արտազ (Սուրբ Թադէոսի), եւ Աղբակ (Սուրբ Բարթողիմէոսի): Մեր եկեղեցւոյ ուղիղ առաքելականութիւնը երկու բան կը հաստատէ: Նախ, թէ ան նախնազոյն եւ ամենէն հարազատ եկեղեցիներէն մին եղած է, եւ ապա, թէ Հայաստանեայց եկեղեցին իրապէս հաստատուած է որպէս անկախ եկեղեցի յատկապէս եւ բնորոշ կերպով Հայ ժողովուրդին համար ի Հայաստան աշխարհ:

Առաքելական քարոզութեանց վերջաւորութեան, հակառակ բազմիցս կրկնուած հալածանքներու հա-

յոց Սանատրուկ թագաւորի (75-110 թ.), Խոսրով Բ թագաւորի (230 թ.), եւ Տրդատ Գ թագաւորի (287 թ) կողմէ, քրիստոնէութիւնը պաշտօնապէս պետական կրօնքի վերածուեցաւ 301 թուականին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Պարթեւ Հայրապետի (վիւճ. 325 թուին) քարոզութեամբն ու Տրդատ Գ Արշակունի հայոց թագաւորի (մեռած 330 թուականին) Գրիգորի ձեռամբ բժշկութեամբն ու մկրտութեամբը, հանդերձ արքայական ընտանեօք: Անշուշտ որ նման ժողովրդային եւ քաղաքական դրութեան մը ամբողջական դարձը պետականօրէն դէպի քրիստոնէութիւն յանկարծակի կատարուած դէպք մը չեղաւ, այլ շարաշար դէպքերու եզրակացութիւնն ու վերջնական արդիւնքը միայն, նախորդող շրջանի առաքելական քարոզութեանց:

Քաղաքական Պարագաները

Վերելի ընդհանրացումներէն պահ մը հեռանալով հարկ է այժմ որոշ մանրամասնութեամբ քննարկել հայոց պատմութեան այս մեծագոյն անկիւնա-դարձին՝ քրիստոնէութեան ծագման ներքին ծալքերը: Նկատի առնուելու են, օրինակի համար, ժամանակաշրջաններու բաժանումը, քաղաքական տուեալներն ու պայմանները, գոյութիւն ունեցող օտար եւ հայ աղբիւրները, որոնք բոլորը միասնաբար լոյս կրնան սփռել հայ քրիստոնէութեան ծագման ինքնուրոյն վրայ:

Ժամանակագրութեան տեսակէտէն գատորոշելու ենք առաջին երեք դարերը, որոնք առաքելական քարոզչութեան դարերն են, յաջորդող 150 տարիներէն, այսինքն մինչեւ 301 թուականը, եւ անկէ ետքն ալ մինչեւ 450 թուականը, որու ընթացքին թէ՛ քրիստոնէութիւնը պետականացաւ Հայաստանի մէջ, եւ թէ՛ գիրն ու գրականութիւնը ստեղծուեցան մեր ազգին համար, առաջին հերթին Աստուածաշունչ Մատեանը հայերէնի թարգմանուելով Ե դարու երկրորդ կիսուն:

Քաղաքական դէպքերը նկատի ունենալով կրնանք ապահով կերպով տեսնել որ Ա դարէն մինչեւ 428 թուականը, Հայաստանի վրայ իշխեցին Հայ Արշակունիներ: Հռոմեացի 63 (Յ.Ք.) թուի դաշնագրով

ընդմէջ Հռոմի եւ Պարթեւաստանի, համաձայնութիւն գոյացաւ որ Պարթեւներու թագաւորին եղբայրը Հայաստանի վրայ իշխէ որպէս ենթա-կայ Հռոմի կայսրին: Ասոր վրայ ուրեմն, 66 թուականին Հայաստանի առաջին Արշակունի թագաւորը՝ Տրդատ Ա (63-75 թ.) դէպի Հռոմ ճամբորդեց թագ ստանալու համար Ներոն կայսրէն ու վերադառնալու Հայաստան որպէս թագաւոր:

Տրդատ Ա վերականգնեց Հայաստանի թագաւորութիւնը եւ վերստին կառուց հին Արտաշատ մայրաքաղաքը, որ քանդուած էր հռոմայեցի զօրավար Կորբուղոնի ձեռքով Քրիստոսէ ետք 59 թուին: Տրդատի յաջորդ Սանատրուկ թագաւոր (75-110 թ.) իր կարգին կառուց արքայանիստ քաղաք մը եւս Մծուրք անունով, Եփրատ-Արածանիի եզրին, պարսպապատեց զայն, եւ իր արձանն ալ հոն կանգնեցուց: Այդ մասին կը կարգանք Փաւստոս Բիւզանդի Պատմութիւն Հայոց երկին մէջ: Արտաշատ կործանեցաւ Մարկոս Աւրելիոս կայսր Բրիտոս զօրավարի ձեռքով 163 թուականին, եւ անոր փոխարէն Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքը կառուցուեցաւ Սանատրուկ թագաւորի որդի՝ Վաղարշի (117-140 թ.) կողմէ որ հայոց թագաւորն էր:

Մեր նիւթին առնչակից ըլլալով, մեզի համար կարեւոր է գիտնալ որ Հայաստանի վերոյիշեալ երեք մայրաքաղաքները միջազգային յարաբերութեանց եւ առեւտուրի կարեւոր կեդրոններ ըլլալով Ասորիքի եւ Հայաստանի միջեւ, կարելի դարձուցին քրիստոնէութեան թափանցումը ի Հայաստան, նոյնիսկ առաքելական շրջանին, ինչպէս նշած է Հայկ Մելքոնեան իր Հայ-Ասորի Յարաբերութիւններ կարեւոր գիրքին մէջ:

Այս առնչութեամբ Գ դարու սկիզբը քաղաքական երկու կարեւոր դէպքեր պատահեցան, մին Ասորիքի եւ միւսը Պարթեւաստանի մէջ, որոնք ուղղակի կապ ունեցան քրիստոնէութեան դէպի Հայաստան ներթափանցման հետ: Ասորիքի, ծանօթ նաեւ որպէս Օսրոյնէ-Երեսիա, վերջին թագաւորը՝ Աբգար Թ (197-216 թ.), իր արքայանիստ քաղաքին Երեսիոյ մէջ (Ուրֆա) գերի կ'իջնար

Շաբ.ը էջ 19

UNDER THE AUSPICES OF THE ARMENIAN CONSULATE GENERAL



LARK Musical Society presents

A MANSURIAN TRIPTYCH
In Commemoration of the Armenian Genocide of 1915

Լարք Երասժշտական Ընկերակցութիւն
Կը ներկայացնէ

ՄԱՆՍՈՒՐԵԱՆԱԿԱՆ ԵՌԱՊԱՏԿԵՐ
Ի Յիշատակ՝ Ապրիլեան Եղեռնի Չոհեբուն

Donation \$75, \$35, \$20 for each event
(\$15 students and seniors)

Concerts at
Zipper Hall and Alex Theatre
April 20, 23 and 25, 2007 at 8:00 p.m.

For more information call:
818. 500.9997

Ա. ՄՍԲԵՐԳԱՅԻՆ
Ուղտաք, Ապրիլ 20, 2007-ին,
Լոս Անջելեսի Ժամիկ 8:00-ին
Zipper Concert Hall at the Callburn School
200 S. Grand Avenue, Los Angeles, California

Բ. ՄԵՆԵՎԱՅԻՆ
Երկուշաբթի, Ապրիլ 23, 2007-ին,
Լոս Անջելեսի Ժամիկ 8:00-ին
Zipper Concert Hall at the Callburn School
200 S. Grand Avenue, Los Angeles, California

Գ. ԱՌԻՍՏՈՒՄՍԻԱՅԻՆ
Չորեքշաբթի, Ապրիլ 25, 2007-ին,
Լոս Անջելեսի Ժամիկ 8:00-ին
The Alex Theatre
216 N. Brand Boulevard, Glendale, California

I. CHORAL WORKS
Friday, April 20, 2007 at 8:00 p.m.
Zipper Concert Hall at the Callburn School
200 S. Grand Avenue, Los Angeles, California

II. CHAMBER WORKS
Monday, April 23, 2007 at 8:00 p.m.
Zipper Concert Hall at the Callburn School
200 S. Grand Avenue, Los Angeles, California

III. ORCHESTRAL WORKS
Wednesday 25, 2007 at 8:00 p.m.
The Alex Theatre
216 N. Brand Boulevard, Glendale, California

Concerts funded in part by the Los Angeles County Arts Commission.

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՎԱՏՐԻՃ ԾԵՐԷՃԵԱՆ. ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԴՄԵՋԷՆ»

ԽՄԲԱԳՐՈՂՆԵՐ՝ ՊԵՊՕ ՄԻՍՈՆԵԱՆ ԵՒ ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

«Շիրակ» տպարան-հրատարակչատունն է (Կարապետ Հաննէսեան եւ որդիք) ճաշակաւոր տպագրութեամբ լոյս տեսաւ «Վատրիճ Ծերէճեան. Կեանքին եւ Մտածողութեան Ընդմէջէն» 490 էջերէ բաղկացեալ պատկառելի հատորը:

Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան, Հ.Մ.Մ.ի, Հ.Կ.Բ.Մ.ի, Հաճնոյ Հայրենակցականի ղեկավար հանգամանքներով ծառայած Վատրիճ Ծերէճեանը լիբանանահայ գաղութէն ներս քաջածանօթ անձնաւորութիւն մըն է ազգային-քաղաքական-հասարակական գետնի վրայ:

Կ'արժէր, որ այդ ծառայութիւններն ու գործունէութիւնները համադրող եւ իր հասարակական դիմաստուերը կարկառող հատոր մը հրատարակութեան յանձնուէր: Անոր յիշատակին հանդէպ երկրւղած յարգանքով առլցուն կողակիցը՝ Վերժին Ծերէճեան նախաձեռնողը եղաւ իր ամուսնին (սրտի խօսքը կը վկայէ) գործն ու վաստակը ըստ արժանուցն ներկայացնող հրատարակութեան մը, անոր խմբագրումը վստահելով երկու ծանօթ եւ հեղինակաւոր մտաւորականներու՝ Պէպօ Սիմոնեանի եւ Ժիրայր Դանիէլեանի:

Երկու կաթողիկոսներուն՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ.ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա.ի օրհնութեան գիրերը կը վկայեն իր համագային արժէքին մասին, որուն ցոյցումը կը կազմեն գիրքին իր կեանքին եւ հասարակական մտածողութեան նուիրուած էջերը:

Գիրքին ներածական էջերը կը գրաւեն իր յոբելեանին առիթով (Լոս Անճելոս 2000) Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան խօսքը, կեանքի եւ գործունէութեան գիծերը համադրող կենսագրութիւնը եւ մահուան առիթով գրի առնուած Պէպօ Սիմոնեանի եւ Պարոյր Աղպաշեանի գրութիւնները:

Գիրքը ութը մասերու բաժնուած է: Ա. մասը «Յուշեր եւ էջեր Օրագրէն» ոչ միայն իր կեանքէն յուշի հետաքրքրական պատարկներ կը փրկէ, այլեւ՝ լիբանանահայ գաղութի կազմաւորման շրջանին եւ անոր յաջորդող հանգրուաններուն պատմութիւնը կ'ուրուագծէ Քէմփի նկարագրութեամբ, - իր ֆուլբրիքի երանգաւորումով, - ազգային-եկեղեցական կարեւոր դէպքերու եւ դէմքերու անդրադարձումով, իսկ հաճելի ընթերցումի նիւթ կը հայթաթեն «օրագիր»ները, որոնց մէջ եւս կուսակցական եւ քաղաքական գործիչի մտածողութիւնը կ'երեւայ:

Բ. մասը՝ «Լիբանանին Հետ» Լիբանանին հանդէպ տածած մեծ սէրին ընդմէջէն կու տայ Լիբանանի քաղաքացիական պտերագմի տարիներու վերլուծական բնութագրումը, հայերու դրական չէզոքութեան քաղաքականութեան գնահատումով եւ Լիբանանը յուզող տնտեսական-ընկերային-քաղաքական հարցերուն անդրադարձող յօդուածներով, որոնք քաղաքագետի լուսարձակին իրապաշտութիւնը կը հաստատեն անժամանցելիութեան յատկանիշով:

Գ. մասը՝ «Հայկական Դատը եւ Ազգային Ազատագրական Պայքարներ»ը գրութիւններով միջազգային քաղաքականութեան՝ փոքր եւ ճնշուած ազգերու դատին հանդէպ, - հայ, քիւրտ, պաղեստինցի, - անարդար եւ խարդախ դիւանագիտութիւնը կը վերլուծէ պատմական անդրադարձներով ձաղկելով անոնց անբարոյականութիւնը:

Գ. մասը՝ «Հայաստան» անկախութեան շրջանին վերաբերող, Ս.Գ.Հ.Կ.ի կեցուածքները յստակացնող (Կեդրոնական Վարչութեան հանգամանքով) Հայրենիք-Սփիւռք նոր յարաբերութիւններու քաղաքականութիւնը առաջադրող եւ հայրենաշինութեան մէջ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի դերը ընդգծող ընտրուած գրութիւններու մէկտեղումն է:

Ե. մասը բաղկացնող գրութիւնները, որոնք հանրային գործիչի հրատարակախօսական խօսքերէն փունջ մը կը մէկտեղէ, կը շօշափեն ազգային, կրթական, ազգապահպանման հարցեր, որոնք սեւեռակէտ ունին Սփիւռքի գոյատեւումը, Հայկական Դատի հետապնդումը, նահատակներուն կտակին հանդէպ հաւատարմութեան ուխտը՝ միշտ ապրող հայրենիքի իրականութեան վրայ խարսխելով հայութեան երազը:

Զ. մասը՝ կը բովանդակէ հրապարակագրական էջերը, որոնք բացի տեսական եւ գաղափարախօսական հարցեր արծարծելէ, դիրքորոշումներ բանաձեւելէ իր հասարա-

կական-կուսակցական համոզումները կ'արտայայտեն՝ ճշմարտութեան խօսքին ապաւինած խիզախութեամբ:

Է. մասը՝ տրամադրուած է հինգ հարցազրոյցներու, որոնց բովանդակութիւնը կ'առնչուի ազգային միասնականութեան, հայրենի անկախ պետականութեան, սփիւռքահայութեան հայրենիքի շուրջ համախմբման: Ղեկավար դիրքերու վրայ ազգային համագործակցութեան հաւատացող, զանոնք հայութեան մէջ ընդհանրացնելու համար աշխատող ղեկավար մը եղած է Վատրիճ Ծերէճեան հատուածականը գերադասող սահմանափակ մտայնութիւններու դէմ պայքարելով:

Ը. մասը՝ վկայութիւններէ հատուածներ են Վատրիճ Ծերէճեանի հրատարակած «Գնդակահարուած Սէր»ը պատմուածքներու հատորին մասին: Վկայութիւններ՝ Թորոս Թորանեանէ, Արամ Սեփեթեանէ, դոկտ. փրոֆ. Սուրէն Դանիէլեանէ, Ժիրայր Հանիէլեանէ, Պէպօ Սիմոնեանէ: Տարբեր անկիւններէ անոնք կատարած են հատորին արժեւորումը:

«Վատրիճ Ծերէճեան. Կեանքին եւ Մտածողութեան Ընդմէջէն» գիրքը ամբողջական երեսը եւ բազմակողմանի յատկութիւններ կը ցոյցանէ Լիբանանի մէջ գործած հասարակական դէմքի մը՝ յաջող եւ նպատակայարմար խմբագրումի գնահատելի եւ բժախնդի ճիգով: Հատորին բովանդակութիւնը կը շնչէ այժմէականութեամբ:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ԳԵՈՒԲՍՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՍԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆԲ - ԼԱ ՔՐԵՍԵՆՈ
ԳԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00



Slim-Band Weight Loss Centers

David G. Davtyan M.D., FACS, FICS

Եթէ ուզում եք նիհարել արագ եւ ընդմիջու եւ նորից լինել առողջ եւ գեղեցիկ, Վիրաբոյժ Դաւիթ Դաւթեանի կենտրոնը առաջարկում է անվտանգ եւ ապահով նիհարելու լաւագոյն միջոցը:

“LAP-BAND”

2001 թուականից մեր փորձառու եւ նուիրուած անձնակազմը օգնել է հարիւրաւոր հայերի եւ ամերիկացիների նիհարել եւ վերադարձնել իրենց գեղեցկութիւնը, առողջութիւնը եւ երջանկութիւնը:



DAVID G. DAVTYAN M.D., FACS, FICS

- American Board of Surgery
American Board of Bariatric Medicine
Fellow American College of Surgeons
Fellow International College of Surgeons
American Society of Bariatric Physicians
American Society for Bariatric Surgeons
American Society of Breast Surgeons
American Society of Clinical Oncology
American Society of Surgical Oncology
European Society of Surgical Oncology

- GLENDALE
BEVERLY HILLS
ORANGE COUNTY

We offer attractive financing. LAP-BAND is now approved by Blue Cross. Medicare and other insurance companies

We also specialize in treatment of: CANCER and diseases of - Breast - Colon - Stomach - Liver, Pancreas - Gall Bladder


GLENDALE (818) 546-1500 www.LapBandLa.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.





AGBU Asbeds
Cordially invite you to


An Evening with Scholars

PROFESSOR VAHAKN DADRIAN
“Historical Answers to Turkish Denials”

and

PROFESSOR TANER AKCAM
“Turko-Armenian Relations After Hrant Dink”

FRIDAY, APRIL 20th, 2007 – 8:00 PM
AGBU Manoogian-Demirdjian School
Aghajanian Hall
6844 Oakdale Ave., Canoga Park, CA
Reception will follow
FREE ADMISSION
For more information please call (626)794-7942



**AGBU Hye Geen
Forum for Armenian Cultural
and Social Studies**

&

**CSULA School of Social Work
Armenian Social Work Caucus**

Invite You to

**THE 2ND ANNUAL
INTERDISCIPLINARY CONFERENCE**

**“The Status of Armenian Communities
Living in the United States”**

Feature Speaker:

Prof. LYUDMILA HARUTYUNIAN, Ph.D.
*Dean of Sociology Department,
Yerevan State University*

Saturday, April 28, 2007
9:00 am to 3:30 pm

California State University, Los Angeles
5151 State University Drive,
Los Angeles, CA 90032

Registration – \$25
Student Registration – \$15

Program and registration available at
WWW.AGBU.ORG/HYEGEEN

Send inquiries to:
agbuhyegeen@gmail.com

**GENOCIDE
COMMEMORATION**

Please join the AGBU-AYA San Fernando Chapter
in remembering the Armenian Genocide of 1915

SATURDAY, APRIL 21, 2007
8:00 PM – 10:00 PM

AGBU-AYA NAZARIAN CENTER
6844 Oakdale Avenue, Canoga Park, CA (818) 313-9449

-- Opening Ceremony by --
the AGBU-AYA Antranig Scouts with anthems performed
by the AGBU-AYA Hye-Herosner Marching Band

-- Performances by --
the AGBU-AYA Sardarabad Dance Group


-- Participation of --
top bands Sight of Sound and Silent Noise

-- Special Guest Appearance by --
Daniel Decker, famous vocalist

-- Inspirational words by distinguished speakers --

FREE ADMISSION


Contributions are greatly appreciated and will assist AGBU-AYA in continuing
to provide cultural, scholastic, athletic and artistic programs for the Armenian youth.



THE QUALITY AND SAFE ALTERNATIVE FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

2007-2008 ACADEMIC YEAR
GRADES 9 - 12

For registration information, a campus tour and meeting with the principal, please call (626) 794-0363



AGBU CENTENNIAL SPONSOR




6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercescasino.com

ԻՐԱՆԱՏԱՅ ԿԵԱՆՔ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՂԱՅԵՐԷՆ

ՀԱՄԱԳԻՐԾ՝ Ն. ՏԷՐԵԱՆ

Երեւանում թարգմանուել է և լոյս է տեսել իսլամական սուրբ գիրքը՝ Ղուրանը: Թարգմանիչն է Իրանահայ գրական գործիչ Էդուարդ Հախուերդեանը, որի գլխավորությամբ արեւելահայերէնի է թարգմանուել Ղուրանը: Այդ կապակցութեամբ Հայաստանի Գրողների Միութիւնը կազմակերպել էր շնորհանդէս, որին մասնակցել են մի շարք մտաւորականներ և Հայաստանի իրանական դեսպանատան մշակութի կենտրոնի պաշտօնեաներ: Կարդացուել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի շնորհաւորական ուղերձը: Նշելի է որ Ղուրանը առաջին անգամ – ոչ լրիւ կերպով – տպագրուել է հայերէն 1909 թուին և վերահրատարակուել 1912ին: Վերջին թարգմանութիւնը մասամբ լրիւ է և անթերի:

Թեհրանի «Նայիրի հրատարակչականը անցեալ ամիս լոյս է ընծայել իրանահայ տաղանդաւոր բանաստեղծ Վարանդի մէկ նոր հատորը՝ «Դիմակ և Հայելի», 136 էջերից բաղկացած: Նշելի է որ Վարանդը իր արժանի տեղն ունի արդէն հայ գրականութեան անդաստանում և համարուած է վերջին երեք տասնամեակների իրանահայ գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներից մէկը: 30ից աւելի քերթողագրքերի հեղինակ է և ցարդ արժանացել է մի քանի գրական մրցանակների, շքանշանների և պատուոյ գրերի:

Թեհրանի մէջ Հայաստանի

դեսպանատան առջեւ ատրպէյճանցիների կատարած ցոյցի ընթացքին բախումներ տեղի ունեցան ոստիկանութեան հետ: Այս մասին յայտնեց Պաքուի մէջ Հարաւային Ատրպէյճանի ազգային զարթօնքի շարժում կոչուած կազմակերպութեան ներկայացուցիչ Աղլրի Ղարաղալլին: Ըստ իրեն, տուեալ պահին փրկագինով ազատ են արձակուած ձերբակալուած ցուցարարներից չորսը: Ըստ Ղարաղալլիի, իրաւապահ մարմինները ցուցարարներին քշել են դեսպանատան կողքին գտնուող Ուսանողների այգին, բայց ցոյցը շարունակուել է այնտեղ, ուր «բանաձեւի» ընթերցումից յետոյ, ոստիկանները և յատուկ սպասարկութիւնները ձերբակալել են վեց հոգի, որոնցից չորսը վեց հազար դոլար փրկագինով ազատ են արձակուել:

Այս և նման «բողոքի ցոյցերը» յաճախ են տեղի ունենում Թեհրանում և Թաւրիզում: Սակայն կարգապահական ուժերը աշուրջ են նման արարքների դիմաց և ժամանակին կանխում են նման անկարգութիւններ:

«Բաֆֆի» մարզա-մշակութային համալիրում կատարուեց նոյն համալիրի սկատուների երգման արարողութիւնը:

Երեկոյեան ժամը 6:30ից սկսուեց ծրագիրը ուր տասնեակ պատանի-պարմանուհիներ ու երիտասարդներ գեղարուեստական ծրագրով և մարմնամարզական շարժումներով ելոյթ ունեցան: Ծրագրի սկզբում մարզադաշտ մուտք գործեց սկաուտական եռ-

եակ նուագախումբը և սկատուները մորսի նշաններով ողջունեցին ներկաներին: Ապա մուտք գործեցին տարբեր հատուածների պատանի-երիտասարդները և հրապարակ բերեցին Իրանի, Հայաստանի ու Միութեան դրօշները, որոնցից իւրաքանչիւրը ծածանուեց պատկան հիմնով:

Օրուայ առթիւ սկատուական երգչախումբը կատարեց ազգային երգեր, թատերական բաժնում իրականացուեց տեխնիկային ներկայացում, նաեւ կատարեցին գեղարուեստական շարժումներ և ֆիզիքական աշխատանքներ: Միջոցաւմանը ներկայ էին Թ.Հ.Թ. Պատգամաւորական ժողովի անդամներ, Թեհրանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վարազդատ Ա. Քհնյ. Տէրտէրեանը, այլ միութիւնների սկաուտապետեր, հիւրեր և ծնողներ:

Հ.Հ. Գիտութեան Ակադեմիայի Վիկտոր Համբարձումեանի անուն Բիւրականի Աստղադիտարանի տնօրէն դոկտ. Հայկ Յարութիւնեանը դիմել է Թեհրանի պատկան մարմիններին, իրանահայ անունի առաջին կին աստղագէտ Ալեյնոյշ Տէրեանի արխիւը փոխադրել Հայաստան: Նշելի է որ Երեւանում լոյս տեսնող «Հայկական Հանրագիտարանի» 2րդ հատորում անդրադարձ կը լինի մեծ գիտնականի կեանքին և գործունէութեանը:

Թեհրանի Չհարմահալի Հայ Ուսումնասիրաց Միութեան սրահում տօնուել է նոյն միութեան հիմնադրման 76ամեակը: Խօսք է առել միութեան փոխ նախագահ Վազրիկ Յակոբեանը և յաջողու-

թիւն մաղթել միութեան դեկավարներին և անդամ-ուհիներին:

Գործադրուել է գեղարուեստական կոկիկ ծրագիր: Այստեղ չի չենք, որ 1930 թուականին, մի խումբ Չարմահալ գաւառին պատկանող երիտասարդներ, Աբադանում հիմք են դնում այդ միութեանը, նպատակ ունենալով օգնել իրենց ծննդավայր գիւղերի հայկական դպրոցներին: Այնուհետ միութիւնը մասնաճիւղեր է ունեցել Ահալաբ, Աղաջարի, Մասէջ Սոլէյման, Քերմանշահ և Սպահան քաղաքներում:

Իրանահայ Գրողների Միութեան կենտրոնատեղիում, Գրողների Մութիւնը գումարեց իր 23րդ ընդհանուր ժողովը: Եղան՝ շրջանաւարտ վարչութեան երկամեայ գործունէութեան քննարկում, գնահատական և քննադատական ելոյթներ, առաջարկներ և այլն:

Ապա, ընդհանուր ժողովն ընտրեց նորընտիր 5 հոգանոց վարչութիւն, որն ժողովի դիւանի ներկայութեամբ, գումարեց իր անդրանիկ նիստը և ընտրեց՝

Թորգոմ Տէր Յակոբեան՝ նախագահ

Սեդրակ Գոջամանեան (Սեթօ) փոխնախագահ

Վերժիկ Մահմուդեան՝ քարտուղար

Արմինէ Ագոյեան՝ գանձապահ Սոնա Խոջասարեան՝ հանրային կապ:

Յիշենք, որ Իրանահայ Գրողների Միութիւնը հիմնուել է 1961 թուին: Հիմնադիր անդամներն են եղել բանաստեղծներ Դեւր, Արամ Գառօնէն, Զօրիկ Միրզայեանը, Եղիա Հայպետը, Հրայր Ֆալեանը, Արմանտը, Գալուստ Խանենցը, Յովհաննէս Մարդը և ուրիշներ:



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



Wahib

FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION





MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՄԱԿ-Ը ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Շարունակուած էջ 7-էն

Թոյլատրել մարդու իրաւունքների աջակցի կողմնակից խախտումների դէպքում, ինչպիսին ցեղասպանութիւնն է» նոյնիսկ այդ խախտումների համար պատասխանատու կառավարութեան «կամքին հակառակ»: Այս հարցին պատասխանած 12 երկրներում ամենատարածուած պատասխանն այն է, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը նման դէպքերում պարտաւոր է ռազմական ուժի կիրառում թոյլատրել:

Չինաստանի հասարակութիւնը ամենաբարձր (76%) աջակցութիւնն է յայտնել այն գաղափարին, որ ՄԱԿ-ը միջամտելու պատասխանատուութիւն ունի: Այս երկրին յաջորդում են Ամերիկայի Միացեալ Նահանգները (74%), Պաղեստինեան տարածքները (69%) եւ Իսրայէլը (64%): Ամենացածր աջակցութիւնը ցուցաբերում են Ուկրաինայում (40%), Թայլանդում (44%), Ռուսաստանում (48%) եւ Արժենտինայում (48%): Սակայն այն 4 երկրներում, որտեղ ասում են, թէ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը նման պատասխանատուութիւն չունի, համամասնութիւնները տատանում են ընդամէնը 16-31 տոկոսի միջակայքում: Հայաստանում հարցուածների մեծամասնութիւնը նոյնպէս գտնում է, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը պարտաւոր է ռազմական ուժի կիրառում թոյլատրել ցեղասպանութեան նման ոճրագործութիւնները կանխարգելելու նպատակով: Չնայած հայերն ընդհանուր առմամբ կողմ են Դարժուրում քայլեր ձեռնարկելուն, այնուամենայնիւ, մեծ թուով մարդիկ վստահ են այս հարցում: Հայերի 2/3-ը (66%) այն կարծիքին է, որ մարդու իրաւունքների ծանրագոյն խախտումներից մարդկանց պաշտպանելու համար ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը պարտաւոր է հաւանութիւն տալ ռազմական միջամտութեանը՝ «անգամ իրենց կառավարութեան կամքին հակառակ»: Միայն 16 տոկոսը չի կիսում այս կարծիքը, իսկ 19 տոկոսը հարցին չի պատասխանել:

«Յատկանշական է մարդու իրաւունքների հիմնախնդիրների նկատմամբ խիստ տարբեր մտեցումներ ունեցող երկրներում միջազգային համերաշխութեան աստիճանը ՄԱԿ-ի կողմից թոյլատրուած ռազմական գործողութիւնների անհրաժեշտութեան վերաբերեալ», - ասում է Համաշխարհային հարցերով Շիկագոյի խորհուրդի ուսումնասիրութիւնների գծով գործադիր տնօրէն Քրիսթոֆեր Ուիթնին:

Դարժուր

Այն 10 երկրներում, որտեղ հարց է ուղղուել մասնաւորապէս Դարժուրում միջազգային միջամտութեան վերաբերեալ, հարցին պատասխանածների մեծամասնութիւնը կողմնակից է, որ ՄԱԿ-ը միջոցներ ձեռնարկի այնտեղ կոտորածներին վերջ տալու համար: Բոլոր երկրներում ամենատարածուած պատասխանն այն է, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը Դարժուրում միջամտութիւն թոյլատրելու առնուազն իրաւունք ունի, իսկ շատերն էլ վստահ են, որ նա պարտաւոր է միջոցներ ձեռնարկել: Սակայն

մեծ թուով մարդիկ չեն պատասխանել հարցին՝ ասելով, որ անտեղեակ են Սուդանում առկայ հակամարտութեան մասին:

ՄԱԿ-ի կողմից քայլեր ձեռնարկելու օգտին յայտնուած ամենաբարձր աջակցութիւնը բացառապէս Ֆրանսայում, որտեղ 84 տոկոսի կարծիքով՝ Անվտանգութեան խորհուրդը Դարժուրում միջամտութիւն թոյլատրելու կամ «պատասխանատուութիւն» (55%), կամ «իրաւունք» (29%) ունի: Ֆրանսային կրնկակոխ հետեւում է Ամերիկայի Միացեալ Նահանգները, որտեղ 83 տոկոսն գտնում է, որ Անվտանգութեան խորհուրդը միջամտութիւն թոյլատրելու կամ «պատասխանատուութիւն» (48%), կամ «իրաւունք» (35%) ունի: Իսրայէլցիները (77%) յաջորդն են, որ, ըստ էութեան, կողմնակից են ՄԱԿ-ի միջամտութեանը. նրանց 46 տոկոսի ասելով՝ ՄԱԿ-ը քայլեր ձեռնարկելու պատասխանատուութիւն, իսկ 31 տոկոսի ասելով՝ իրաւունք ունի: Հարցուած հայաս-

տանցիների 44 տոկոսը կարծում է, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը կամ պարտաւոր է (29%), կամ էլ իրաւունք ունի (15%) թոյլատրելու Դարժուրում ռազմական միջամտութիւն՝ տեղի ունեցող սպանդին վերջ տալու համար: Միայն 9 տոկոսն է ասում, որ ՄԱԿ-ը չունի նման իրաւունք: «Հանգամանքը, որ հարցուողների գրեթէ կէսը (46%) այս հարցին չի պատասխանել, ցոյց է տալիս, որ մեծ թուով հայեր իրազեկուած չեն Արեւմտեան Սուդանում տեղի ունեցող արիւնալի իրադարձութիւններին», - եզրակացնում է գեկոյցը: 7 երկրներում հարցուողներին նաեւ հարց է ուղղուել, թէ կո՞ր՞մ են արդեօք, որ «Դարժուրում իրակաւնացուող սպանդին վերջ տալու նպատակով միջազգային խաղաղապահ ուժերի կազմում» մասնակցեն նաեւ իրենց երկրների զօրախմբերը: Ֆրանսայում գերակշիռ մեծամասնութիւնը (84%) կողմ է, որ

իրենց զօրախմբերը մասնակցեն Դարժուրում խաղաղապահ ուժերի կազմում: Իսկ ամերիկացիների պարագայում 65 տոկոսն է կողմ այդ գաղափարին, եւ դէմ է 28 տոկոսը: Դարժուրում տեղի ունեցող սպանդին վերջ տալու նպատակով միջազգային խաղաղապահ ուժերի կազմում հայաստանեան զօրախմբերի մասնակցութեանը հայերն ընդհանուր առմամբ դէմ են: Հայաստանցիները 45-27 տոկոս չարաբերակցութեամբ դէմ են հայրենի զօրախմբերի մասնակցութեանն այդպիսի առաքելութեան կազմում, իսկ 28 տոկոսը հարցին չի պատասխանել:

Բոլոր բացառապէսների եւ մեթոդաբանութեան համար այցելել www.worldpublicopinion.org եւ www.thechicagocouncil.org կայքէջերը, ինչպէս նաեւ դրանց հայերէն տարբերակները՝ www.acnis.am կայքէջում:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդակաճ Սիւնեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով G.Y.O.1060N.ALLEN AVE.PASADENA,CA 91104

ARMENIAN GENOCIDE UNITED COMMEMORATIVE COMMITTEE

ՀԱՅԿԱՍՏԱՆ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՂԵԿՈՉՄԱՆ ՀԱՍՏԱԳՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

92 genocide

Ցեղասպանութեան Ողեկոչման երթ

1915 APRIL 24 2007 92

Երեքշաբթի 24, Ապրիլ, 2007 Սոնթայելլոյի Յուշարձան (Bicknell Park) Կ.Ա. ժամը 10-ին սկսեալ մինչեւ կ.ե. ժամը 2:00

հոգեհանգստեան արարողութիւն կ.ա. ժամը 11:00-ին որմէ ետք տեղի պիտի ունենայ Ծաղկեպսակներու և մեխակներու վետեղում

ՎԱՅԱՍԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԳԱԻԱԹԻ ԶԱՌՈՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Ֆուտբոլի Հայաստանի գալաթի խաղարկութիւնում կայացած քառորդեզրափակիչի պատասխան հանդիպումներում որեւէ անսպասելի արդիւնք չգրանցուեց: Ինչպէս եւ սպասուում էր՝ առաջին խաղերում առաւելութիւն ստացած թիմերը դուրս եկան կիսաեզրափակիչ:

«Բանանցը» խոշոր 6:1 հաշուով դարձեալ ջախջախեց «Կիլիկիա-ին»: Առաջին խաղում եւս «Բանանցը» յաղթել էր խոշոր՝ 5:1 հաշուով: Խոշոր հաշիւ գրանցուեց նաեւ «Բենտոնիտ» - «Փիւնիկ» խաղում, որտեղ 4:1 հաշուով յաջողութեան հասան հիւրերը: Առաջին խաղում «Փիւնիկը» յաղթել էր 4:0 հաշուով:

Կիսաեզրափակիչ դուրս եկաւ նաեւ «Արարատը», որը 2:1 հաշուով յաղթեց «Ուլիսին», իսկ առաջին խաղում առաւելութեան էր հասել 2:0 հաշուով: Գիւմրիում կայացած «Շիրակ» - «Միկա» մրցավէճում գրանցուել է ոչ-ոքի՝ 1:1: Այս հաշիւը ձեռնատու էր գործող գալաթակիր «Միկային», որը առաջին խաղում յաղթել էր 4:1 հաշուով:

Այսպիսով կիսաեզրափակիչում հանդէս կուգան «Փիւնիկի», «Միկան», «Արարատը» եւ «Բանանցը»:

ՃԻԲՏՈՅԻ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՅՈՎՎԱՆՆԵՍ ԴԱԻԹԵԱՆ ԿԸ ՆՈՒԱՃԷ ԱՐԾԱԹԷ ՄԵՏԱԼ

Ճիւտոյի Հայաստանի հաւաքականը Սերպիայում կայացած եւրոպայի առաջնութիւնում արժանացել էր մէկ արծաթէ մետալի, որը 60կգ քաշային կարգում նուաճել էր Յովհաննէս Դաւթեանը:



Յովհաննէս Դաւթեան (կենտրոն) եզրափակիչ մեծամարտի ընթացքին

Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Գագիկ Աղամալեանը «Ա1+»-ի հետ գրոյցում նշեց, որ սպասելիքները արդարացան 50%-ով. «Մենք յոյս ունէինք, որ մետալ կը նուաճի նաեւ 66կգ քաշային կարգում հանդէս եկող Արմէն Նազարեանը»: Հրազդանցի այս մարզիչը եւրոպայի նախորդ առաջնութիւնում դարձել էր փոխախոյճան, իսկ 2005թ. դարձել էր հին աշխարհամասի ախոյճան:

Հաւաքականի գլխավոր մարզիչի կարծիքով Նազարեանը անյաջողութեան մատնեց քաշային կարգը փոխելու պատճառով:

Homenmen Marathon Training Team

For more information

Call : (818) 425 - 0836

E-mail : Homenmen@homenmen.org

Visit : www.myspace.com/homenmen

ՇՆՈՐՎԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Փիէն եւ Նաթալի Քէօրոզլեաններու մանջ գալաթով բախտաւորուելուն ուրախ առիթով, Տէր եւ Տիկ. Նորայր եւ Մարի Խաչատուրեաններ կը շնորհաւորեն նորածինին ծնողքը եւ ընտանեկան պարագաները, յատկապէս մեծ հօր եւ մեծ մօր Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրոզլեանները: Այս ուրախ առիթով «Մասիս» շաբաթաթերթին կը նուիրեն \$100 տուար:

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՆԳՆՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 32-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մանչեսթըր Սիթի - Չարլթըն	0-0	Արսենալ - Ուեսթ Համ	0-1
Էվըրթըն - Ֆուլհամ	4-1	Ռիտինկ - Լիվըրփուլ	1-2
Չելսի - Թոթեմհամ	1-0	Պլեքսըրն - Ասթոն Վիլլա	1-2
Միտլըլդպորո - Ուաթֆորտ	4-1	Ուիկան Աթլ. - Պոլըրն	1-3
Շեֆիլդ Եուն. - Սիլքեսթըլ	1-2	Փորթսմութ - Մանչեսթըր Եուն.	2-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Մանչեսթըր Եունայթըտ	32	25	3	4	75-23	78
Չելսի	32	23	6	3	56-19	75
Լիվըրփուլ	32	18	6	8	50-22	60
Արսենալ	32	16	8	8	52-29	56
Պոլըրն	33	16	6	11	40-40	54
Էվըրթըն	33	13	12	8	44-29	51
Թոթեմհամ	32	14	6	12	44-45	48

ԳԵՐՄԱՆԻՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտբոլի առաջնութեան 28-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Աախըն - Տորքմունտ	1-4	Վոլսպուրկ - ՖՍՎ Մայնց	3-2
Այնթ. Ֆրանքֆորթ - Քոթայիւս	1-3	Յերթա Պերլին - Արմ. Պիլըֆելտ	1-1
Շալքե-04 - Մեոնընկլատախ	2-0	Պ. Լիվըրքուզըն - ՎՖԼ Պոխում	1-4
Համպուրկ - Շթութկարթ	2-4	Վարտըր Պրէյնըն - Նիւրնպերկ	1-0
Հանովըր-96 - Պայերն Միւնխ	1-2		

Առաջատար խումբերու դասաւորումը

Շալքե-04	28	17	5	6	44-26	56
Վարտըր Պրէյնըն	28	16	6	6	62-33	54
Շթութկարթ	28	15	7	6	49-33	52
Պայերն Միւնխ	28	15	5	8	42-32	50
Պ. Լիվըրքուզըն	28	12	6	10	44-40	42
Նիւրնպերկ	28	9	14	5	40-26	41
Հանովըր-96	28	9	8	11	35-39	35

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 31-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Վալանսիէ - Լիոն	0-0	Օքսէռ - Պորտո	0-0
Մոնպը - Թրուա	0-0	Լորիան - Նանսի	0-1
Սէնթ Էթիէն - Նանթ	2-1	Րընէ - Լանս	1-0
Փարիզ Սէն Ժերմէն - Լը Մանս	2-1	Սըտան - Թուլուզ	0-2
Սոչո - Նիս	1-1	Մարսէլ - Լիլ	4-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	30	20	6	4	54-23	66
Լանս	31	13	10	8	42-33	49
Թուլուզ	31	14	7	10	33-32	49
Սոչո	31	12	11	8	37-35	47
Մարսէլ	31	13	6	12	40-32	45
Սէնթ Էթիէն	31	13	6	12	48-41	45
Պորտո	30	13	6	11	31-31	45

ԻՏԱԼԻՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան 30-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ֆիորենթինա - Ասրոլի	4-0	Փարմա - Լիվորնո	1-0
Սիենա - Ուտինեզէ	2-2	Լացիո - Մեսինա	1-0
Աթալանթա - Քիեւօ	1-0	Փալերմօ - Քալիարի	1-3
Ռեճինա - Ինթեր Միլան	0-0	Սամոորիա - Թորինօ	1-0
Քաթանիա - Ա. Էս. Ռոմա	0-2	Ա. Սէ. Միլան - Էմփոլի	3-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթեր Միլան	30	25	5	0	63-23	80
Ա. Էս. Ռոմա	30	18	8	4	58-23	62
Լացիո	30	17	7	6	52-24	58
Ֆիորենթինա	30	16	8	6	51-26	56
Ա. Սէ. Միլան	30	15	10	5	42-26	55
Փալերմօ	31	13	9	9	44-37	48
Էմփոլի	30	12	9	9	33-31	45

ՍՊԱՆԻՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 29-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Սարակոսա - Պարսելոնա	1-0	Ռէալ Մատրիտ - Օսասունա	2-0
Աթլէթ. Պիլլաո - Վալենսիա	1-0	Սելիլլա - Ռասիլ	0-0
Եսիպանիոլ - Ռէալ Սոսիէտ	1-0	Մայորքա - Կեթաֆէ	2-0
Լեվանթ - Ռէալ Պաթիս	1-1	Տեփ. Քորունա - Կիմնասթիք	1-0
Յուլվա - Սելթա Վիլո	4-2	Վիլառալ - Աթլէթ. Մատրիտ	0-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Պարսելոնա	29	16	8	5	59-27	56
Սելիլլա	29	16	7	6	48-24	55
Ռէալ Մատրիտ	29	16	6	7	41-25	54
Սարակոսա	29	14	8	7	43-29	50
Վալենսիա	29	15	5	9	40-29	50
Աթլէթ. Մատրիտ	29	13	8	8	34-24	47
Յուլվա	29	13	6	10	40-38	45

ԿՈՐՈՒՄՆԵՐ

ԹԱԴԵՈՍ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ
(ՄԱՅՐՈՒՆ ԲԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻ)

Սրանից 40 օրեր առաջ մահացած թաղէոս Տէր Սարգիսեանը ծնունդ էր 1926 թուին, Իրանի Չհարմահալ գաւառի Աղբուլաղ գիւղում հոգեւոր ընտանիքում, ուր եւ գրաճանաչ էր դարձել:

Վեց տարեկան հասակում կորցնում է ծնողներին եւ երկու տարի յետոյ բերում է Նոր Զուղա, ուր տեղի հայոց դպրոցներում ստանում է տարրական եւ միջնակարգ կրթութիւն: Չհարմահալի շրջանի Լիւսասան եւ Բուրվարի Սանդէսֆիլդ գիւղերի հայոց դպրոցներում պաշտօնավարել է մի քանի տարի:

Ապա անցնում է Անդիմեշի քաղաք եւ ծառայում է Ամերիկեան բանակում որպէս թարգմանիչ: Բ. Աշխարհամարտի տարիներին, 1943 թուին փոխադրւում է Աբադան, որն Իրանի կարեւոր կենտրոններից է: Այդտեղ գործի է անցնում Նաֆթալին ընկերութեան մէջ, ստանձնելով կարեւոր պաշտօններ: Նաֆթալին ընկերութեան կողմից ուղարկւում է Լոնտոն մասնագիտանալու իր գործի ասպարէզում: 1977 թուին հանգստի կոչուելով գնում է Թեհրան ու որպէս փորձագէտ գործի է անցնում «Շիրաթ» ձկնորսական ընկերութեան մէջ:

1951 թուին ամուսնանում է ազնիւ եւ տիպար հայուհի Արփիկ Մարգարեանի հետ եւ բախտաւորւում են երեք զաւակներով՝ Վահէ, Զահեր եւ Շաքէ, որոնք իրենց ծնողներին պարգեւում են տասը թոռներ:

Հանգուցեալը բազմազբաղ լինելով հանդերձ, ամբողջ հոգով նուիրուելով ազգային հասարակական աշխատանքներին իր սրտցաւ նուիրեալ կեցողութեամբ թողել է հիմնական եւ մնայուն հետքեր, որոնք միշտ պիտի յիշուեն:

Աբադանում եղած տարիներին մաս է կազմել տեղի ազգային մարմիններին, ծնողական խորհուրդներին, քարտուղարի կամ գանձապահի պաշտօններում:

Թեհրանում մաս կազմելով Չհարմահալ Ուսումնասիրաց Միութեան, ցուցաբերել է եռանդուն գործունէութիւն:

Եօթը տարի վարել է Թեհրանի Ս. Գէորգ եւ Ս. Թադէոս-Բարթողի-



մէոս եկեղեցիների հաշուապահի պաշտօնը կամաւոր կերպով: Մեծապէս օգնել է այդ եկեղեցիների բարեկարգմանը եւ օգնել այդ շրջաններում բնակուող ծերերին եւ անկարողներին: Իսլամական յեղափոխութիւնից յետոյ թաղէոսը իր արժանաւոր կողակից Արփիկի հետ լքում է միաջնակ անձանց եւ կարիքաւորներին օժանդակելու բարի գործին: Անհատական միջոցներով ուտելիք եւ վառելանիւթ է հասցնում բազմաթիւ չքաւոր ընտանիքների եւ անհատներին:

1989 թուին ընտանեօք հաստատուելով Միացեալ Նահանգներ, աչտեղ եւս նուիրում է հասարակական ասպարէզին: Ամբողջ 12 տարի սիրով վարում է Իրանահայ Միութեան գրադարան-ընթերցարանի վարիչի պաշտօնը ամենայն բարեխղճութեամբ եւ նուիրումով: Զասը տարի մաս է կազմել միութեան «Տեղեկատու» ամսաթերթի խմբագրական կազմին եւ աշխատել ամենայն եռանդով:

Թաղէոս Տէր Սարգիսեանը համակ սէր էր եւ նուիրում: Բարի էր եւ խղճամիտ: Օգտակար էր բոլորին եւ կարողութեան սահմաններում նիւթապէս եւ բարոյապէս օժանդակում էր իր հարազատներին եւ շրջապատին, այստեղ եւ Հայաստան: Հանգուցեալ թաղէոս Տ. Սարգիսեանի յիշատակը միշտ վառ կը մնայ իր հարազատների, ընկերների եւ բազում ծանօթների սրտերում:

ՇՈՒԿԱՆԳԻՍ
ՆԵՐՄԵՍ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ

Հանգուցեալ ՆԵՐՄԵՍ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Ապրիլ 15, 2007ին, Փասատինայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd., յաւարտ Ս. Պատարագի Սգակիրներ՝ Այրին՝ Անայի Նալպանտեան Զաւակները՝ Տօքթ. Կարօ Նալպանտեան եւ զաւակները՝ Բաֆֆի եւ Անի Յովսէփի եւ Քարոլին Նալպանտեան Նորա եւ Արա Պագարեան եւ զաւակները՝ Արեգ եւ Արփա Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

Արժանիքի մէջ մահացած շրջանիս նախկին ատենապետ եւ հասարակական գործիչ Ընկ. Գէորգ ՄՈՒՇԵԱՆԻ մահուան առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը կը յայտնէ իր խորագգաց ցաւակցութիւնը Արժանիքի մեր ընկերներուն ու բարեկամներուն, յատկապէս Մուշեանի ընտանեկան եւ ազգականական բոլոր պարագաներուն:

«Մասիս»

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

Գէորգ ՄՈՒՇԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Պողոս Մարգարեան կը յայտնեն իրենց վշտակցութիւնները, յատկապէս Մուշեան ընտանիքին: Առ այդ \$50 տոյար կը նուիրեն «Մասիս»ին:

ՐԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵՒԹԵԱՆ ԴԱՐՁ

Շաբուուակուած էջ 7-էն

Անտոնիոս Կարակալա կայսեր ձեռքը 216 թուին, եւ իր թագաւորութիւնը իսկոյն վերջ կը գտնէր: Ասորի պատմագէտներ հաստատած են որ Աբգար Թ Նեփալո ծանօթ առաջին քրիստոնեայ թագաւորը եղած էր, ուր նոյնիսկ եկեղեցի մը գոյութիւն ունեցած էր եւ սակայն կործանած՝ Չրհեղեղի մը պատճառաւ 201 թուականին: Քիչ ետքը Պարթեւնէրութեան թագաւորութիւնը կը տապալէր եւ Սասանեաններ կը տիրէին Պարսկաստանի 226 թուականին:

ՇՈՒՄ, ԱՍՈՐԻՔ ԵՒ ՇԱՅԱՍՏԱՆ

Այս երկու դէպքերը, պատահած Հայաստանի անմիջական դրացի պետութեանց մէջ, կը յիշեցնեն մեզի թէ քրիստոնէութեան մուտքը Հայաստան կապ ունեցած է թէ՛ առաջին Լուսաւորիչներու՝ Մբրեցն թաղէոսի եւ Բարթողիմէոսի քարոզութեանց, եւ թէ՛ Ս. Գրիգոր Լուսաւորիչի կատարած հիմնական գործին հետ: Առաքեալները նախ յարաբերութեան մէջ մտած են Աբգար թագաւորները երկրին՝ Ասորիքի հետ, ուրկէ ապա անցած են Հայաստան: Նաեւ, Սասանեան պետութեան հիմնադիր Արտաշիւրի դրդումով, Ս. Գրիգորի հայրը՝ Անակ, սպաննած է հայոց Խոսրով Բ թագաւորը, դէպք մը որ հրաշքի ճամբով ուղղութիւն պիտի տար քրիստոնէութեան պաշտօնական կրօնք դառնալուն Հայաստանի մէջ, Խոսրովի որդի՝ Տրդատ Գ թագաւորի ձեռքով 301 թուականին:

Ազգաթանգեղոս հայ պատմիչը մանրամասնօրէն կը խօսի վերջին այս դէպքերու մասին, սկսելով Խոսրով Բ թագաւորի սպանութենէն, որուն մօտաւոր թուականն է 240, պատմելով Գրիգորի եւ Տրդատի յարաբերութեանց մասին իրենց մանկութենէն մինչեւ չափահասութիւն, եւ վերջապէս Գրիգորի քրիստոնեայ եղած ըլլալը յայտնուելով, Տրդատ չարչարանքներու կ'ենթարկէր զինք, մինչեւ որ թագաւորը ինք կը ստիպուէր լսելու Գրիգորի ձայնը եւ կ'ընդունէր անոր բժշկութիւնը, եւ

ի վերջոյ քրիստոնէութիւնը կը հռչակէր որպէս պետական կրօնք Հայաստանի մէջ, մեր երկիրը դարձնելով նախապէս քրիստոնեայ աշխարհին:

Հարկ է յիշել այստեղ որ Հռոմ քրիստոնէութիւնը որպէս թոյլատրեալ կրօնք ընդունեց կայսրութեան սահմաններէն ներս 313 թուականին միայն, Լիկիանոս կայսեր (312-324 թ.) Միլանի հրովարտակով, բան մը որ չէր նշանակեր կրօնքին պաշտօնական հռչակումը, ինչպէս տեղի ունեցած էր Հայաստանի մէջ 301 թուին: Տարբերութիւնը նկատելի է եւ յատկանշական երկուքին միջեւ:

Մինչեւ 313 թուական Կայսրութեան մէջ անընդհատ հալածանք կար քրիստոնէութեան դէմ, հակառակ գոյութիւն ունեցող Առաքելական Հայրերու քրիստոնէական ջատագովական քարոզութեանց եւ գրականութեան: Այդ հալածանքները արձագանգ գտան Հայաստանի մէջ, կարեւոր կէտ մը որ կը հաստատէ քրիստոնէութեան տարածման իրողութիւնը մեր երկրին մէջ երկրորդ եւ երրորդ դարերուն: Ս. Ակակիոս եւ իր տասը հազար հետեւորդները, կը հաստատէ լատին մարտիրոսագրութիւնը, նահատակուեցան նոր կրօնքի սիրոյն Արարատ լեռան մերձակայքը՝ Ատրիանոս կայսեր օրով մօտ 117 թուականին:

Աւելին, յոյն քրիստոնեայ առաջին պատմաբանը՝ Եւսեբիոս Կեսարացի, իր ծանօթ եւ գերազանց եկեղեցական Պատմութիւն հատորին մէջ կը յիշատակէ Մաքսիմիանոս կայսեր (305-313) մղած պատերազմը հայոց դէմ «իրենց քրիստոնէական կրօնքին վերագրած բարձր արժէքին համար՝ որպէս պաշտամունք հանդէպ աստուածութեան»: Նաեւ Գիովղեստիանոս կայսր հայածեց խումբ մը կոյսեր որոնք փախան Հռոմէն եւ ապաստան գտան վաղարշապատ, հայոց Տրդատ Գ թագաւորի մօտ, ուր սակայն նահատակուեցան կայսերական հրահանգով: Ասոնց մէջ կը գտնուէին առաջին հայ սրբուհիները՝ Գայեանէ եւ Հովփսիմէ:

(Շաբուուակելի 1)

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈՒԿԻ ՇԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՇԵՌԱՉԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

HARUT DER-TAVITIAN
License #0B28270
1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201
Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhype.com
www.excelhype.com
EXCEL
HYE INSURANCE SERVICES
AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

Armenian Athletic Association Ladies Auxiliary

proudly presents

“Fan-tastic Fashion”

*Ladies' & Gentlemen's
Fashion Show Luncheon*

Sunday, April 29, 2007 – Omni Hotel

251 South Olive Street, Los Angeles

10:30am Boutique / Social Hour • 12:30pm Luncheon / Fashion Show



Information & Reservations:

Garine 626-755-4773 gdepoyan@hotmail.com

Dzovig 626-429-8366 vdkoro@yahoo.com

Donation \$75.00